891.71
Б-34

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

~~03 – 3/I~~		~~36/II~~	~~31 – 20/X 39~~	
~~020 – 9/II 26~~				
~~300 – 10/II 28~~				
~~688 – 4/III 28~~				
~~747 – 5/III 28~~				
03 – 29/V 39				

891.71
Ծ-34
ԱՐ

25 SEP 2006

25 NOV 20[illegible]

1001
4866

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՊՈՒՇԿԻՆ ԵՒ ԼԵՐՄՕՆՏՈՎ

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՒՅԿ

Հրատարակ. Նիկողայոս Թորոսեանի

ՏՊԱՐԱՆ Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ
ՄՈՍԿՈՒԱ—1905.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека Н.С.Ф.Р.
7/XI 1922
Ереван, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

14 MAY 2013

1 1627

Дозволено цензурою. С.-Петербургъ, 24 Февраля 1905 г.

Тип. Х. Бархударянцъ, Москва, Мясной пер., д. Бѣляева.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այնքան ծոխ և մեծածաւալ է ռուսաց բանաստեղծական գրականութիւնը, որ մի ամփոփ, ամբողջական գաղափար տալ այդ գրականութեան բազմաթիւ ներկայացուցիչների մասին — դա մի անհատի ոյժից վեր է: Այդպիսի բարդ և ծանրաբեռն գործ հնարաւոր է գլուխ բերել միայն հաւաքական ոյժերով:

Ձեռնարկելով «Ռուս բանաստեղծներ» ժողովածուի հրատարակութեան, մենք միանգամայն հեռու ենք մեր անհատական ոյժերով կատարած այս գործին լիակատարութեան արժէք տալու յաւակնութիւնից և, գիտենք, որ այսպիսի մի ժողովածուն՝ առաջին փորձը լինելով մեր մէջ՝ չէ կարող զերծ լինել շատ թերութիւններից: Մեր նպատակն է, կարողացածին չափ, նմուշներ տալով ռուս յայտնի բանաստեղծների ստեղծագործութիւններից, գլխաւորապէս նրանց քնարերգական երկերից, **գէթ մասամբ** գաղափար տուած լինել հայ ընթերցող հասարակութեան ռուսական պօէզիայի մասին, որի հետ մենք իսկապէս ծանօթ ենք միայն հատուկտոր, պատահական թարգմանու-

թիւններով՝ լոյս տեսած և ցրուած այս ու այն պարբերական հրատարակութիւններում, ժողովածուներում, դասագրքերում:

«Ռուս բանաստեղծներ» ժողովածուն բաղկացած կը լինի չորս գրքոյկից, որոնք հետզհետէ լոյս տեսնելով՝ վերջը կը կազմեն մի ստուար հատոր:

Ներկայ առաջին գրքոյկում մենք զետեղում ենք միմիայն Պուշկինին և Լերմօնտովին՝ ռուսական պօէզիայի այդ երկու մեծանուն ու հսկայ ներկայացուցիչներին, որոնք բոլորովին ուրոյն տեղ ունեն գրաւած ռուսաց բանաստեղծական գրականութեան մէջ:

Տպագրութեան համար արդէն պատրաստ է «Ռուս բանաստեղծներ» ժողովածուի նաև երկրորդ գրքոյկը (Կոլ'ցով, Նեկրասով, Նիկիտին, Պլեշչէեվ), որի հրատարակութիւնը կախուած կը լինի այն բարոյական ու նիւթական աջողութիւնից, որ ներկայ գրքոյկը կը գտնէ մեր մամուլի և ընթերցող հասարակութեան մէջ:

Պարտք ենք համարում հրապարակաւ մեր անկեղծ շնորհակալութիւնն յայտնելու հայերիս քաջածանօթ պ. Իւրիյ Վեսելովսկուն և իւր ուսուցչապետը հօրը, որոնք իրանց օգտակար խորհուրդներով չեն զլացած աջակցութիւն ցոյց տալու գործիս:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԱԼԻՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ՊՈՒՇԿԻՆ

(Ծնաւ 26 մայիսի 1799 թ. վախճ. 29 յունուարի 1837 թ.)

25 NOV 2010

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՊՈՒՇԿԻՆԻ

ՀՐԵՇՏԱԿ

Քնքշյշ հրեշտակը գըլուխ խոնարհած՝
Համեստ շողում էր եդեմի գըռան.
Իսկ մըռայլ դևը թըռչում վըզովուած՝
Մութ, գըժոխային անդունդի վերան։

Եւ չար, կասկածոտ ոգին ուրացման
Անթարթ նայում էր մաքրափայլ ոգուն,
Եւ զգում իւր մէջ ակամայ զըղջման
Մի նոր ու անյայտ քաղցրը ջերմութիւն։

Ների՛ր, ասում էր, որ տեսայ ես քեզ,
Օ՜, ինձ քո պատկերն իզուր չը շողաց.
Դեռ կեանքից իսպառ չե՞մ դարձրել երես,
Դեռ ողջ աշխարհը չե՞մ արհամարհած։

ԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԷԻ...

Ես կարծում էի, սիրարս մոռացաւ
Սիրոյ տառապանքն—էլ չե՛ տանջուելու.
Ես ասում էի. «Ի՛նչ կար ու անցաւ,
Էլ չե՛ կրկնուելու, էլ չե՛ կրկնուելու»:

Անցաւ սիրոյ վիշտ, անցաւ լուռ թախիծ,
Խաղաղ նիրհեցին և՛ մեղմ անուրջներ...
Բայց ահա նոքա յուզվում են նորից՝
Քո ոյժն զգալով, ո՛վ յաղթական սէր...

ԱՇՆԱՆ ԱՌԱՒՕՏ

Ահա աղմուկ—դաշտում սրինգը սուլելով,
Իմ մենաւոր, խաղաղ ժամը վերդովեց,
Եւ սիրավառ ցընորքներրս վանելով,
Վերջին գողտրիկ երազիս էլ վերջ տուեց.
Փախաւ արդէն մութ ըստուերը գիշերի,
Լոյսը բացուեց. փայլփլում է գունատ օր.
Էլ նա չը կայ... Համրը, անշարժ, տաղտկալի
Դատարկութիւն տիրել է իմ չորս բոլոր...
Գետափ ելայ, ուր յաճախ էր նա սիրում
Դուրս գալ զբօսանք գիշերներին լուսնկայ,
Սակայն այնտեղ, մարգագետնի դալարում
Նորա սիրուն ոտքի հետքն էլ չը գտայ:
Եւ մրտախոհ ընկած թաւոտ անտառներ,
Սկսեցի ձայն տալ հոգուս հատորին,
Անունն յիշել, բայց, ո՛հ, դատարկ հովիտներ
Միայն հեռուից լոկ արձագանք ինձ տուին...

Եւ հրմայուած՝ ես առուակին մօտեցայ—
Նա իւր սահուն կոհակներն էր թաւալում.
Բայց անմոռաց այն պատկերը չը տեսայ
Ե՛ւ առուակի պարզ ու վըճիտ ջըրերում։
Էլ նա չըկա՜յ... Մինչ քաղցրաշունչ, նոր դարուն
Անջատուած եմ ես սիրասուն իմ եարից.
Անկեանք ձեռքով ահա արդէն ցուրտ աշուն
Ծառեր, թըփեր զըրկել է թաւ դալարից.
Եւ ժանտ աշունն աղմըկում է անտառում,
Օդում պըտտում տերևն անկեանք ու անուժ.
Աշնան քամին մերթ սուլում է, մերթ լըռում,
Զորս բոլորը ծով են կապել մեզ-մըշուշ։
Օ՜, դաշտ, բըլո՛ւր, ո՜, դուք ծանօթ հովիտնե՛ր,
Որ պահում էք անդորրութիւն սրբազան,
Դուք իմ վըշտի և խընդութեան վըկանե՛ր,
Մընա՜ք բարև... մինչ գալուստը նոր գարնան։

ԱՆՉԱՐ

ԹՈՑՆԻ ԾԱՌ

Զոր, ամայի անապատում,
Յաւերժ կիզող արևի տակ
Անչարն, ասես, ահեղ պահնորդ,
Կանգնած է լուռ ու մեն-մենակ։

Անապատի ծարաւ կուրծքն է
Լի զայրոյթով նոյան բուսցրել.
Ե՛ւ ոստերի կանաչն անկեանք,
Ե՛ւ արմատը—թոյնով լըցրել։

Թոյն է ծորում չոր կեղևից,
Հալչում տօթից միջօրէին.
Եւ սառչելով՝ թանձրը, փայլուն
Խէժի փոխվում երեկոյին։

Մահու ծառին չեն մոտենում
Ո՛չ մի գազան, ո՛չ մի թռչուն.
Լոկ մրրիկն է հետը շրփվում
Եւ վարակուած թռչում հեռուն։

Եւ թէ ամպն է ցօղում անձրև,
Թափառելով ծառի գլխին.
Անձրևն իսկոյն թոյն է կլարում
Ու ոստերից հոսում գետին։

Բայց, տես, մի օր մարդը մարդուն
Իշխանական խի՛ստ հայեացքով
Ղրկեց թունոտ այն ծառի մօտ,
Որ թոյն բերի նա իւր ձեռքով։

Եւ նա անխօս ճամբայ ընկաւ,
Հընազանդած խի՛ստ հայեացքին.
Եւ երկրորդ օրն առաւօտեան
Վերադարձաւ թոյնը ձեռքին։

Բերաւ նա թոյն—խէժ մահաբեր,
Եւ ոստ՝ ջորցած տերևներով.
Նորա ճակտից մահու քրտինք
Թափվում էր ստէն կաթիլներով։

Բերա՜ւ... դողա՜ց... և թուլացած
Երեսն ի վար ընկաւ գետին.
Զոհուե՛ց ըստրուկ, անզօր գերին
Իւր զօրաւոր, քաջագործ պետին։

Իսկ պետն անյաղթ՝ բերած թոյնով
Իւր հընազանդ զէնքը սրբեց.
Եւ այդ զէնքով մահ սփռելով,
Շատ աշխարհներ առաւ, տիրեց...

Օ՜, ՎԱՐԴ-ԱՂՋԻԿ...

Օ՜, վարդ-աղջիկ, ես դերի եմ քո ձեռում,
Բայց այդ կապանքն ինձ ամօթանք չէ բերում:
Այդպէս բլբուլն—երգիչ-արքան մեծանուն
Իւր նազելի, հրպարտ վարդի ջերմ սիրուն
Գերի դարձած՝ դափնեայ դալար թրփերում
Խոր գիշերին վարդի սէրն է միշտ երգում:

ԲԱՂՁԱՆՔ

Դանդաղ սահում են կեանքիս հէգ օրեր,
Եւ ամէն վայրկեանն իմ թօշնած սրտում
Լքնում է դժբախտ և՛ սիրոյ ցաւեր,
Եւ անմտութեամբ խելքս վրդովում:
Բայց ես անարտունջ լալիս եմ լռիկ...
Լացն աւելի՛ է ինձ մխիթարում:
Հոգիս պաշարած վշտի փոթորիկ,
Լացի մէջ նա դառն հրճուանք է զգում:
Օ՜, կեանքի երազ, դու պատրուն տեսի՛լ,
Քեզ չե՛մ ափսոսում, չըքացի՛ր շուտով.
Թանկ է ինձ համար սիրել ու տանջուիլ...
Հոգ չէ, թող մեռնիմ... միայն սիրելով:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI. 1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
10014
4984

ԿՈՎԿԱՍ

Ահա՛ Կովկասն իմ ոտքի տակ։ Ես մեն-մենակ վերևում
Սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պէս բարձր, արծիւն հեռվում, դէպի երթեր վերացած՝
Օդում հանգիստ սաւառնում է՝ թևերն հրոցը տարածած.
Եւ տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փրփրալից
Ինչպէ՞ս ծընվում, ինչպէ՞ս ձիւնի հիւսեր փրլչում սարերից։

Այստեղ ահա շա՜ր-շա՜ր ամպեր մեղմ սահում են իմ դիմաց,
Գոռ ջրվէժներ նոցա ճեղքում ու սրլանում դէպի ցած.
Եւ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կոյտերին.
Իսկ քիչ ներքև—չոր մացառէ, մամուռ՝ կրպած քարերին.
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կանաչ թաւուտ անտառներ,
Ուր վրխտում են եղջերուներ և ծրլվրլում թրռչուններ։

Այնտեղ արդէն և՛ մարդիկը բուն են դրրած սարերում,
Ե՛ւ խաշները մեղմ մայում են դալարախիտ վայրերում։
Եւ խաշնարածն իջնում է ցած—դէպի ուրախ հովիտներ,
Դէպի խաղուն Արագվայի կանաչագեղ, զով ափեր.
Եւ չըքաւոր ասպատակն է դարան մտնում կիրճի մէջ,
Ուր Թերեքի կատաղալից, զուարճ խաղին չըկայ վերջ։

Խաղում է նա ու մրռնչում, որպէս վայրագ մի կորիւն,
Որ վանդակից որս է տեսել աչքը կոխել սև արիւն.
Ե՛ւ խրփվում է նա ափերին, և՛ ապարդիւն կռիւ տալիս,
Ե՛ւ իւր քաղցած ալիքներով ժայռեր լեղում ու լալիս...
Սակայն ի զո՞ւր։ Նորա համար չըկայ ուրախ ո՛չ մի օր.
Նորան ճրնշում ու խեղդում են լուռ քարափներն ահաւոր։

ՓՈԹՈՐԻԿ

Դու տեսե՞լ ես ժայռի գըլխին
Ճերմակ հագած մատաղ կուսին,
Երբ աղմկած խոր խաւարում
Ամբերի հետ ծովն է խաղում։
Երբ փայլակը կուսի դէմքին
Շողշողալով՝ հուր է վառում,
Քամին գալիս, թեթև շորին
Արագ դիպչում ու սըլանում։

Գեղեցի՜կ են ծովն ու ալիք
Աղմկալից խոր խաւարում,
Ե՛ւ մութ երկինք, գոռ փոթորիկ
Փայլակների վառ շողերում։
Բայց հաւատա՛, որ այդ ժամին
Մատաղ կոյսը ժայռի գըլխին
Գեղեցի՜կ է էլ առաւել
Երկնքի՛ց էլ փոթորկի՛ց էլ։

ԹԷ ՇՐՋՈՒՄ ԵՄ...

Թէ շըրջում եմ աղմկալից փողոցում,
Թէ մտնում եմ ես մարդաշատ սուրբ տաճար,
Թէ նստած եմ ջահիլների շըրջանում,—
Միշտ նոյն մտքերն ինձ յուզում են անդադար։

Ես ասում եմ—տարիք կանցնեն ու կը գան,
Եւ ամենքըս, որ կանք այստեղ խըմբովին,
Պէտք է նընջենք երկրի խորքում յաւիտեան,
Եւ, դուցէ, մէկն արդէն մօտ է իւր մահին։

Թէ նայում եմ մենակ կանգնած լուռ կաղնուն,
Ես խորհում եմ—այդ նահապետն անտառի,
Որ վըկայ է իմ պապերիս մեռնելուն,
Ե՛ւ ինձ թաղած՝ էլի կապրի շա՜տ տարի։

Թէ սիրասուն մանուկին եմ փայփայում,
Մրաքումն արդէն ես ասում եմ՝ մնաս բաւ.
Քե՛զ եմ տալիս ես իմ տեղն այս աշխարհում,
Ինձ—մահ, իսկ քեզ—դեռ կըժպտի նոր արև։

Եւ այսպէս միշտ—ամեն մի օրն ու տարին
Սովորել եմ մրտածմունքիս հետ կապել.
Եւ նոցա մէջ ըսպասելով օրհասին,
Աշխատել եմ գալիք մահըս գուշակել։

Եւ, ո՞վ գիտէ, ի՞նչ տեղ է մահ պատրաստում
Ինձ օրհասը—ծովում, մարտում թէ ճամբին.
Գուցէ, հանդչեմ հէնց մոտակայ այս հովտում—
Նա ընդունէ իմ ցըրտացած, անշունչ դին։

Թէպէտ մէ՞կ է, ուր էլ հանդչեմ յաւիտեան,
Ո՛ւր էլ փըտի սառն, անզգայ իմ դիակ.
Բայց, ա՜խ, քաղցր էր, թէ գըտնէի գերեզման
Սիրած երկրում—հայրենիքիս հողի տակ։

Եւ թոռ կեանքը, մատաղ կեանքը սիրաւէտ
Շիրմիս ափին զուարճանայ ու խաղայ.
Եւ անտարբեր բընութիւնը իւր յաւէտ
Գեղեկցութեամբ շուրջըս փայլէ ու ըղդայ։

ՎԵՐԱԾՆՈՒՄՆ

Անկոչ մի տաղանդ իւր կոշտ վըրձինով
Հըզօր հանճարի պատկերն է ուզում
Կոկել, նորոգել—և անմիտ կերպով
Նա նոր նըկար է վերան խըզըզում...

Բայց օտար ներկը, չանցած շատ տարի,
Մաշվում, թափվում է, ձըկան թեփի պէս,
Եւ ահա դարձեալ գործը հանճարի
Իւր նախկին փայլով գալիս է հանդէս։

Այդպէս ջնջվում են և ի՛մ հէգ սրտից
Կուրծքըս կեղեքող մոլորութիւններ.
Եւ այնտեղ զարթնում, եռում են նորից
Նախկին օրերիս պայծառ տեսիլներ։

ԹՌՉՆԻԿ

Օտար երկրում պահպանելով սըրբութեամբ
Աւանդութիւնն իմ հայրենի աշխարհի,
Արձակում եմ ես թըռչնիկին դէպ անամպ
Գարնան եթեր, որ նա խնդայ ու ճախրի...
Եւ իմ հոգին ճաշակում է ըսփոփանք.
Օ՜, էլ ի՞նչու Աստուծոյ դէմ տրտնջել,
Երբ գէթ մի հատ արարածին ազատ կեանք
Եւ խնդութի՜ւն կարողացայ պարգևել։

ԿԱԼԱՆԱՒՈՐ

Խռնաւ բանտում պատուհանիս մօտ նըստած,
Ես նայում եմ, ինչպէս տըխուր ու դարդոտ
Արծիւ-ընկերս ազատ օդում մեծացած՝
Աչքիս առաջ որս է կըտցում արիւնոտ։

Եւ կըտցածը դէն ձըգելով՝ վըշտահար
Նայում է ինձ, ասես, միտքըս գուշակած,
Աչքով անում, բարձրը կանչում անդադար.
«Թըռչե՛նք, ընկե՛ր, թո՛ղ այդ բանտըդ անիծա՜ծ»։

«Մենք բընութեան ազատ որդիք՝ համարձակ
Թըռչե՛նք այնտեղ, ուր կա՛ն ամպեր ու լեռներ,
Ուր փայլո՛ւմ են ծովի ջըրեր կապուտակ,
Ուր քամի՛ն է միայն մեզ հետ—մե՛ղ ընկեր...»

ԾԱՂԻԿ

Ծաղի՛կ, ես քեզ տեսայ թոշնած,
Պահուած էիր դու գըրքում
Եւ անսովոր մի ջերմ պատրանք
Իսկոյն եռաց իմ կըրծքում։

Ո՞ւր ես ծաղկել, ե՞րբ, ո՞ր դարնան,
Ո՞վ է արդեօք քեզ քաղել։
Օտա՞ր... ծանո՞թ... Եւ ինչո՞ւ է
Ծաղի՛կ, այստեղ քեզ պահել...

Արդեօ՞ք անխօս մի վըկայ ես
Դու զոյգ մատաղ սըրտերի
Ջերմ, սիրային տեսակցութեան,
Եւ սիրավառ զըոյցների...

Թէ՞ մի տխուր յիշատակ ես
Դառն անջատման, տանջանքի.
Կամ դաշտերում լուռ կատարած
Անյոյս, մենակ զբօսանքի...

Եւ ո՞ւր են այն սիրող սրբտերն,
Կա՞ն, ապրո՞ւմ են երջանիկ.
Թէ՞ երկուսն էլ, քեզ պէս անյայտ,
Թառամել են, ա՜յ ծաղիկ։

ՄԱՐԳԱՐԷ

Ցոգնա՞ծ ու տանջուա՞ծ, հոգով ծարաւի՞
Մութ անապատում թափառում էի.
Եւ ահա այնտեղ տեսայ վեցթեւեան
Ելաւ Սերովբէն իմ դէմ-յանդիման.
Եւ նուրբ մատներով թեթեւ ու քընքոյշ
Շրփեց իմ աչերն, կարծես նինջ անոյշ.
Եւ զարհուրանքով նոքա բացուեցան,
Ահաբեկ արծուի աչերի նման.
Եւ նա ականջիս դիպաւ կամացուկ,
Եւ իմ լըսելիքն յուզեց ձայն, աղմուկ.
Անսացի երկնի սասանումն ու դող,
Հրեշտակների թըռիչք լեռներում,
Ծովի յատակին զեռունների լոր,
Ողկոյզի աճումն ճոխ հովիտներում։
Եւ նա հրպուեցաւ իմ սառ շրթունքին,

Եւ պոկեց, հանեց լեզուս մեղսալի՝
Սովոր նենգութեան և նանիր խօսքին.
Եւ այնտեղ դրեց իմաստուն օձի
Թունաւոր խայթոցն իւր արնոտ ձեռով.
Եւ նա պատառեց իմ կուրծքը սրով
Եւ հանեց սիրտս դողդողջ, բաբախուն
Եւ նորա փոխան՝ իմ բացուած կրծքում
Նա դրեց բոցոտ ածուխ վառվռուն.
Եւ ընկած էի ես անապատում,
Ուրպէս մի դիակ։ Եւ ահա բարձրից
Անսայի Տիրոջ կոչը դէպի ինձ.
«Ե՛լ, ո՛վ մարդարէ, և լո՛ւր, և հայի՛ր,
Եւ հրեղօր կամքիս հրլու, անձնուէր,
Շրջի՛ր դու ծովեր, շրջի՛ր դու երկիր,
Եւ խօսքով այրի՛ր մարդկային սրտեր»։

ԲԼԲՈՒԼ

Վառ գարուն է։ Լուռ այգու մէջ խորին, խաղաղ գիշերին
Արևելքի խօսուն բլբուլն սէր է երգում վարդ-եարին.
Բայց լռեա է վարդն... Սիրոյ տաղին նա անզգայ, անտարբեր,
Մեղմ ճօճում է ոստի վերայ և խոր նիրհում ողջ գիշեր...

Չէ՞ որ այդպէս դու էլ պօէ՛տ, գեղեցկութեան անկենդան
Երգ ես ձօնում... Ո՜հ, ուշքի ե՛կ, քեզ մի՛ մատնիր կորստեան...
Տե՛ս, նաղելիդ քեզ չէ լսում. նա անփոյթ է, անըզգայ.
Դու նայում ես—նա ծաղկում է. ձայն ես տալիս—ձայն չըկայ...

ՓԱՌՔԻ ՏԵՆՉԸ

Երբ քո սիրով ու զրգռանքով հրմայուած,
Ես քո առաջ լուռ ծունկ էի խոնարհած,
Եւ նայելով քո նազելի պատկերին՝
Խորհում էի, որ դու իմն ես, ով անգին.
Դու լաւ գիտես, որ այդ քաղցրիկ ժամերում
Փառքի տենչը կուրծքիս խսկի չէր յուզում.
Դու լաւ գիտես, որ այս ունայն աշխարհի
Աղմկայոյզ կեանքից իսպառ հեռացած,
Պօէտ անունն ինձ թւում էր տաղտկալի.
Որ կեանքի մէջ երկար կրռուից վաստակած,
Ես խուլ էի և անտարբեր բընաւին
Մարդկանց անվերջ և՛ գովեստին, և՛ ծաղրին.
Եւ մի՞թէ ինձ կարող էին, ով ընկեր,
Հասարակաց ծաղը ու ծափը վրդովել
Երբ հայեացքդ սրտիս խորքը թափանցած,
Եւ այնպէս մեղմ ձեռքդ գրլխիս խոնարհած,

Դու քաղցրաձայն շշշընջալով ականջիս՝
Հարցնում էիր. «Ասա՛, ա՛յ իմ սիրելիս,
Բախտաւոր ես, սիրո՞ւմ ես ինձ անսահման,
Արդեօք երբէք էլ ուրիշին, ինձ նման,
Դու չե՞ս սիրիլ և ինձ չե՞ս տալ մոռացման...»
Իսկ ես... ես լուռ, ես հազիւ հաղ ինձ զբսպած,
Երջանկութիւնն ողջ էութիւնս պաշարած,
Կարծում էի, թէ այդ քընքշոյշ վիճակում
Էլ չեմ տեսնիլ երբէք ես դառն անջատում:
Կարծում էի—կեանքն էլ չունի ապագայ,
Եւ անջատման դաժան օրը էլ չի գայ...
Բայց ի՞նչ եղաւ... Ցաւ, արտասուք ու տանջանք,
Ուխտի դրժումն, նենգ զգայում, սև լուտանք,—
Այդ բոլորը յանկարծ, խարխուլ շէնքի պէս,
Փըլչե՞ց գլխիս... Եւ, ո՜հ, այժմ—ի՞նչ եմ ես,
Եւ ի՞նչ տեղ եմ: Ահա մենակ ու լռիկ,
Որպէս ճամբորդ, որին դաժան փոթորիկ
Կաշկանդել է խուլ ամայի մի վայրում,
Ես կանգնած եմ, և ամեն ինչ իմ աչքում,
Իմ չորս բոլոր մութ—խաւար է երևում:

Եւ մի նոր լոյս, մի նոր տենչանք այս ժամին
Բորբոքում են ու աղմկում իմ հոգին.
Փառք եմ ուզում, որ անունը փառաւոր
Քո լեսելիքն ալեկոծէ ամեն օր,
Որ ամեն տեղ, ամեն լոպէ ու վայրկեան
Քեզ պաշարեն փառքն ու հրոչակն իմ անուան.
Փառք եմ ուզում, փառք փափագում ես միայն,
Որ իմ համբաւն քո ջրոս բոլոր բարձրաձայն
Օդ ղըղդի՛ ։ Եւ դու անդորը ժամերին
Լուռ ունկնդիր անսուտ, անկեղծ իմ ձայնին,
Ցիշես, ինչպէս դառն հրաժեշտ քեզ տալիս
Եւ տխրալից մեր անջատումն ողբալիս,
Վերջի՛ն անգամ, խոր գիշերին ես այդում
Քեզնից յուսով ջերմ սէր էի աղերսում...

Օ՜, Մի՛ Տխրիլ...

(ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Օ՜, մի՛ տրխրիլ, մի՛ սրբանեղուիր բընաւին,
Թէ որ կեանքը կամ ջար բախտը խաբեն քեզ.
Դու համբերի՛ր և՛ դառն օրին, և՛ ցաւին,—
Եւ հաւատա՛, ուրախ օրեր կը տեսնես։

Սիրտն ապրելով՝ միշտ տենչում է ապագան.
Ցրխուր ներկան սրբոյ համար ջունի գին.
Թրռուցի՛կ է, շո՛ւտ է անցնում ամեն բան,
Ի՛նչ անցնում է, ա՛յն է քաղցը մեր սրտին։

ՐՕՄԱՆՍ

Աշնան մի խոնաւ, մըռայլ երեկոյ
Անցնում էր կոյսը խուլ-մութ տեղերով
Եւ զաղտնի պըտուղն իւր դըժբախտ սիրոյ
Նա բըռնած ունէր դողդոջ ձեռներով։
Լուռ էր և՛ անտառ, անդորր և՛ լեռներ,
Ամեն ինչ նիրհած գիշերուայ մըթում,
Դէս-դէն ձգելով զզոյշ հայեացքներ,
Կոյսը երկիւղով չորս կողմն էր դիտում։

Եւ նորա աչերն լի հառաչանքով
Կանգ առան անմեղ էակի վերայ...
«Զաւակ իմ, աշխարհ եկած տանջանքով,
Անգիտակ վըշտին, քընած ես հիմայ...
Կը բանաս աչերդ և լի անձկանօք
Սեղմուիլ կուզենաս մայրական կըրծքին,
Բայց դու համբոյրիս ջերմ, սիրաբորբոք
Չե՞ս արժանանալ, զաւակ իմ անգին։

Ինձ դո՞ւր կը կանչես, անուշը կը տաս.
Անջե՞նջ է մեղքիս արատն իմ վերան.
Գիտեմ, դու շուտով ինձ կը մոռանաս,
Բայց չեմ մոռանալ ես քեզ յաւիտեան։
Օթեւան կը տան քեզ օտար մարդիկ
Եւ միշտ խորթ աչքով կը նայեն վերադ.
Դու կասես—ուր են ծընող, ընտանիք,
Բայց մարդ չես գըտնիլ՝ սըրտիդ հարազատ։

Քո հասակակից մանուկների մէջ
Միշտ կը տառապես մըռայլ մտքերով.
Մայրական գըգուանք մինչև կեանքիդ վերջ
Դու կը փափագես գառնացած հոգով.
Ամեն տեղ մենակ, ամենքին օտար,
Միշտ անիծելով և՛ բախտ, և՛ վիճակ,
Բիրտ նախատինքից չես գտնիլ դադար...
Ո՜հ, ների՛ր, ների՛ր ինձ այն ժամանակ։

Քընած ես հիմայ... Թո՛ղ զաւակ թըշուառ,
Քեզ վերջին անգամ սեղմեմ իմ գըրկում։

Օրէնքն անողոք, օրէնքն անարդար
Խուլ տանջանքի է մեզ դատապարտում։
Եւ քանի տարիք դեռ չեն հալածել
Անմեղ հրճուանքը քո անմեղ կեանքի,
Քընի՛ր, սիրելի՛ս, չե՞ն յուզել վըշտեր
Անյոյզ օրերըդ մանուկ հասակի»։

Բայց յանկարծ լուսինն անտառի յետքից
Ճողաց—և կոյսը լուսնեակի փայլով
Տեսաւ մ՚օտ խրճիթ... Գունատ, թախծալից՝
Մօտեցաւ ղըռան դողդոջուն քայլով
Եւ խոնարհուելով՝ կամացուկ դըրեց
Սիրելի մանկանն օտարի շեմում։
Եւ զարհուրանքով երես շուռ տուեց
Ու գիշերային ծածկուեց խաւարում։

ՎԵՐՋԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Քան անդրանիկ ծաղիկները դաշտերի,
Ե՛ւ սիրելի, և՛ թովիչ են աւելի
Վերջի՜ն մարող ծաղիկներ.
Նոքա և՛ ջերմ, և՛ առաւել կենդանի
Զարթեցնում են մեր սըրտերում անցեալի
Տըխո՜ւր, լը.քեա՜ լ անուրջներ։

Այդպէս երբեմն տեսակցութեան վառ ժամից
Ժամն անջատման աւելի՜ է ոգելից։

ԹԱԼԻՍՄԱՆ

Այնտեղ, ուր միշտ ծովն է խաղում
Ժայռերի հետ անսասան.
Ուր լուսինն է ջերմ շողշողում
Մէգ-մըշուշում իրիկուան.
Ուր հարեմում լի հեշտանքով
Օրն է անցնում միւսուլման.
Այնտեղ տուաւ ինձ զրգուանքով
Կախարդուհին Թալիսման։

Նա զրգվում էր և շըշընջում.
«Պահի՛ր իմ այս Թալիսման.
Խորհրդաւոր ոյժ կայ միջում,
Ջերմ սիրով եմ տալիս այն.
Ո՛չ ցաւերից և ո՛չ մահից,
Ո՛չ փոթորկից ժանդ-դաժան,
Օ՜, սիրելի՛ս, կեանքըդ երբէք
Չի՜ փրկիլ իմ Թալիսման։

Եւ ո՛չ նա քեզ Արևելքի
Կը պարգևէ ճոխ դանձեր.
Եւ ո՛չ հասցրած դահ ու փառքի՝
Շա՜տ սարուկների կանէ տէր.
Մըտերմի գիրկ, օտար երկրից,
Դէպի աշխարհ հայրական,
Դէպի հիւսիս — քեզ հարաւից
Չի՜ Թռցնիլ իմ Թալիսման։

Բայց թէ յանկարծ հըրապուրեն
Քեզ նենգալից վառ աչք-ունք,
Կամ սուտ սիրով քեզ համբուրեն
Մութ գիշերին կեղծ շըրթունք,—
Օ՜, սիրակա՛ն, քեզ յանցանքից,
Նոր վէրքերից հոգեկան,
Նենգ դըրժումից, մոռացմունքից
Կը փրկէ՜ իմ Թալիսման»։

ԿԵԱՆՔԻ ՍԱՅԼԱԿԸ

Թէպէտ յաճախ ծանր է բեռը սայլակում,
Բայց շարժվում է նա և՛ թեթև, և՛ արագ.
Միշտ յառաջ է նորան մղում, չի յոգնում
Քաջ կառապանն—հին, ալևոր ժամանակ։

Առաւօտից կեանքի սայլակ նըստելով,
Կառապանին ընկեր դառած անվեհեր,
Մենք քըշում ենք հեղգ ու հեշտանքն ատելով,
Եւ գոչում ենք. «Յառաջ, յառաջ, ա՛յ ձիեր»։

Բայց կէսօրին չըկա՞յ էլ այն ոյժը վառ,
Մենք ջարդուած ենք. ահալե՜ է և ճամբան.
Մեր առաջին խորեր, ձորեր, թումբ ու քար,
Մենք գոչում ենք. «Կամա՛ց, յիմա՛ր կառապան»։

Սայլակն էլի ընթանում է իւր ճամբան,
Մենք էլ արդէն ընտե՛լ ու մե՛րձ գիշերին,
Նիրհելով ենք գիմում դէպի օթևան,
Ժամանակն էլ հա՜ քըշում է ձիերին։

ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍ

Լըճի եղերքին, խուլ անտառներում
Ճըգնում էր երբեմն մի ծեր մենակեաց,
Թաղուած միշտ դըժնեայ պարապմունքներում,
Պասին, աղօթքին անձնատուր եղած.
Արդէն հընազանդ բահ ու թի ձեռքին՝
Ծերուկն իւր համար շերիմ էր փորում
Եւ միայն մահ էր ջերմ, կարօտագին
Սուրբերից հայցում իւր աղօթքներում։

Մի անգամ, ամառն, իւր անշուք ու հին
Խըրճիթի շեմքին՝ աղօթք էր անում
Աշխարհից քաշուած ճըգնող ծերունին.
Թաւ անտառն արդէն մըթնում, սեւանում.

Մառախուղ պատում լեռը կապուտակ.
Մեղմիկ ընթացքով ամպերի միջին
Երկնի երեսով սահում էր լուսնեակ.
Ծերուկն սկսեց նայել ջըրերին...

Նայում է—ահից ակամայ յուզուած,
Եւ ինքըն իւր վերայ անչափ զարմանում...
Տեսնում է—ահա ջըրերը յանկարծ
Եռում, յուզվում են, նորից մեղմանում...
Եւ մէկ էլ... թեթեւ, նըման ըստուերին,
Եւ ճերմակ, որպէս վաղեկ ձիւն դաշտում,
Ջըրից ելնում է մերկ մարմնով մի կին
Եւ լուռ ու նաղով լըճի ափ նըստում։

Նա աչք չի պոկում ծեր աբեղայից,
Նայում, սանրում է գիսակները թաց.
Սուրբ ճըգնաւորը դողում է ահից,
Եւ ինքն էլ նորան դիտում շըլացած.
Տեսնում է, կոյսը ձեռքով է անում,
Կանչում է գըլխի շարժումով արագ...

Եւ յանկարծ, որպէս աստղիկ չըքանում,
Ծածկվում ու կորչում նիրհուն ջրի տակ։

Մըռայլ ծերունին չըքնեց ողջ գիշեր,
Զաղօթեց ողջ օր. հակառակ կամքին՝
Այն թովիչ կուսի տեսնում էր պատկեր
Շարունակ կանգնած աչքի առաջին.
Նորից թաւ անտառն ծածկուեց խաւարով,
Լուսինն ամպերում սահում է դանդաղ.
Եւ նորից կոյսը ջրից դուրս գալով,
Նստում է ափին — գունատ ու չըքնաղ։

Նստում է, նայում ու գըլխով անում,
Հանաքով հեռուից համբոյրներ տալիս.
Մանկան պէս խաղում ու զուարճանում,
Ջրերն է յուզում, քըրքըջում, լալիս...
Կանչում է ծերին, քընքոյշ հառաչում.
«Ա՜խ, արի՛ ինձ մօտ, արի՛, ճըգնաւոր».
Եւ յանկարծ փայլուն ջրերում կորչում.
Խորին լըռութիւն տիրում չորս բոլոր։

Եւ երրորդ օրը անքուն, սիրավառ
Ծերուին ափի մօտ նստած անհամբեր
Զըքնաղ կուսին էր սպասում երկար.
Իսկ թաւ անտառը պատում էր գիշեր։
Անցաւ գիշերը։ Վառ արշալուսին
Զիմացուեց, թէ ո՞ւր չըքացաւ ծերուկ.
Միայն գիւղի տղերք ջրի երեսին
Տեսան—լողում էր մի ճերմակ միրուք...

ԵՐԿՈՒ ԱՍՊԵՏ

Երկու ասպետ խրոխտ կանգնած
Սպանուհու առաջին,
Վառ նայում են աղնիւ կուսին,
Նայում աչքի հէնց միջին։
Երկուսն էլ քաջ, սիրուն դէմքով,
Կըրաւ կրպած սրբատերին,
Քաջ յենուել են զօրեղ բազկով
Իրանց կըտրուկ սրբերին։

Նոցա համար կոյսն անմման
Թանկ է կեանքից ու փառքից.
Բայց ընտրեալը մէկն է միայն—
Ո՞րն է արդեօք երկուսից։
«Ո՞վ է, վըճռի՛ր, քո սիրելին»—
Հարց են տալիս երկուսով.
Նայում ուղի՛ղ կուսի աչքին
Եւ սպասում ջերմ յուսով...

ԴՈՒ ՀԵՌԱՒՈՐ...

Դու հեռաւոր հայրենիքիդ կարօտած,
Օտար երկրից չու�էիր, նաղելի՛ս.
Ես քո առջև այդ յաւիտեան անմոռաց,
Տրխուր ժամին տանջվում էի ու լալիս...
Դողդոջ ձեռքով նազուք մէջքդ փաթաթել,
Քեզ բաց թողնել չէի ուզում յաւիտեան.
Քեզ իմ հառաչքն աղերսում էր չընդհատել
Զարհուրելի այդ տառապանքն անջատման։

Բայց դու յուզիչ, աղետալի համբոյրից
Իսկոյն քո վարդ-շրթունքներդ խըլեցիր.
Մութ ու մըռայլ աքսորանքի այս վայրից
Դու ինձ դէպի մի այլ աշխարհ կոչեցիր։

Դու ասացիր—այնտեղ, ընկե՛ր, այն երկրում,
Ուր երկինքն է յաւերժ կապոյտ ու պայծառ,
Երբ կը տեսնուենք ձիթենու հով ստուերներում,
Նորի՛ց սիրոյ համբոյր կը տանք մենք իրար։

Սակայն, աւա՜ղ, այնտեղ, ուր միշտ ջինջ եթեր
Շողշողում է այնպէս փայլուն, կապուտակ,
Ուր նիրհում են ժայռերի տակ մեղմ ջրեր,—
Այնտեղ յաւէտ դու քուն մնար, իմ հրեշտակ.
Եւ քո տանջանք, գեղեցկութեանդ հրապոյր—
Ո՛ղջ չքացան... շերիմ իջար տարաժամ։
Ո՞հ, չքացաւ և խոստացած քո համբոյր...
Բայց նա ի՛ն է—ան աշխարհում կըստանամ...

ՊՕԷՏ

Քանի Ապոլոն չէ կոչել երգչին
Դէպի սրբազան ոգեւորութիւն,
Ունայն աշխարհի հոգսերի միջին
Թաղուած է երգիչն անխանդ, անաւիւն.
Չէ՛ հընչում նորա քընարն ոգելից,
Ցուրտ թըմրութիւն է հոգին ճաշակում,
Եւ, դուցէ, չընչին շատ էակներից՝
Ամենից չընչին նա է աշխարհում։

Բայց հէնց հասնում է բարբառն երկնային
Երգչի ականջին արթուն, յուշագրաց,
Ցընցվում է իսկոյն պօէտի հոգին,
Որպէս մի արծիւ քընից սթափուած։

Եւ նա անհաղորդ ծափին ու զովքին,
Տխրում, տրտմում է զուարճ աշխարհում.
Ամբոխի պաշտած և ոչ մի կուռքին
Երգիչը երբէ՛ք գլուխ չէ խոնարհում.
Եւ, կարծես, կեանքի խորթ, դաժան զաւակ,
Երգով, յոյզերով կուրծքը ալեկոծ,
Փախչում է նա միշտ դէպի լայնարձակ
Դաշտեր, անապատ, թաւ անտառի ծոց։

ԱՌԱԿ

Մի օր կօշկակարն պատկեր զննելով,
Կօշիկների մէջ սրխալ նրկատեց,
Նրկարիչն խսկոյն վերձինն առնելով՝
Սրխալը շըտկեց։

Սակայն կօշկակարն էլ շատ սիրտ առաւ,
Եւ ուռած, փրքուած՝ խօսքն առաջ տարաւ.
«Երե՛սն էլ է ինձ, պարո՛ն նրկարիչ,
Ծուռ թւում մի քիչ.

Եւ, իրաւն ասած, կո՛ւրծքն էլ չափազանց
Մերկ է նրկարած»...

Նրկարիչն խսկոյն խօսքը կըտրելով,
Գոչեց անհամբեր.

«Դատի՛ր, բարեկա՛մ, միայն դատելով,
Դու մի՛ բարձրանար կօշիկներից վեր»։

Բարեկամ ունեմ ես աչքի առաջ.
Ի՛սկը չըգիտեմ—ի՞նչով է նա քաջ,
Ի՞նչ բանում գիտուն։ Բայց լեզուին նայես,
Լեզուով նա խի՛ստ է... Մէկն ասի—ի՞նչ ես
Դու աշխարհ դատում,
Երբ խելքըդ հաղիւ կօշկին է պատում։

ԱՄՊ

Անցած փոթորկի դու վերջի՛ն սև ամպ,
Լոկ դու ես պայծառ եթերում լողում,
Լոկ դու—ղուարճ օրն պատում տըխրութեամբ,
Լոկ դու ես երկիրն ստուերով ըսքօղում։

Նոր դու երկինքը պատած չորս բոլոր,
Փայլակը մէջքիդ գօտի էր կապում։
Քո՞նն էր որոտմունքն այն խորհրդաւոր,
Քո՛ յորդ անձրևն էր չոր գետինն արբում։

Հերի՛ք է, ծածկուի՛ր։ Քո ժամն է անցել,
Անցել է տարափն, երկիրն զովացել։
Ծառի սաղարթն է քամին փաղաքշում
Ու քեզ հանդարտուած երկնքից քըշում։

ԳԻՒՂ

Ողջոյն քեզ, ով գիւղ, խաղաղ ապաստան
Գործի, հանգըստի, ոգևորութեան,
Ուր քաղցր մոռացման և բախտի գըրկում
Հոսանքն օրերիս իմ մենակ կեանքում
Անցնում է, սահում այնպէս լուռ, անտես,—
Մայրենի անկի՛ւն, ողջունո՛ւմ եմ քեզ։
Ես քո՛ն եմ։ Ե՛ւ ձոխ խընջոյք, խրոխտանք,
Ե՛ւ ալքաների պալատներ շըքեղ,
Ե՛ւ մոլութիւններ, խաղեր ու զբօսանք—
Ո՞ղջը մոռացել... Այժըմ նոցա տեղ,
Նոր կեանք եմ, ով գիւղ, քո մէջ վայելում,
Քո լայն դաշտերում, թաւ անտառներում,

Ինձ տուած ազատ, պարապ ժամերին՝
Իմ բիւր խոհերիս այդ ընկերներին։
Քո՛ն եմ։ Սիրում եմ այս այգին ստուերոտ,
Իւր մեղմ զովանին, ծաղկի անուշ հոտ.
Այս մարգագետինն հոտեղ, դէղաշար,
Ուր աղմկում են առուակներ պայծառ,
Աղմկում, խաղում թըփերի տակին։
Այստեղ իմ աչքին,
Ո՛ւր էլ նայում եմ, հանդէս են գալիս
Շարժո՛ւն պատկերներ։ Տեսնում եմ ահա
Երկու կապտափայլ հարթ լըճի վերայ
Մի բան է յանկարծ սպիտակին տալիս.
Այդ դո՛ւ ես, ձրկնորս, քո առագաստով.
Լըճերից այնկողմ տեսնում եմ շարքով
Կանաչ բըլուրնե՛ր,
Ծաւալուն արտե՛ր,
Դէս ու դէն փըռուած խըրճիթնե՛ր հեռվում,
Թափառող հօտե՛ր խոնաւ ափերում,
Մարգնե՛ր ծըխոտ, ջաղա՛ց թեւաւոր...
Ամե՛ն ինչ այստեղ՝ հեռո՛ւն, չորս բոլո՛ր,

Տեսնում եմ, ինչպէս կըրում է վերան
Հետքեր վաստակի և առատութեան։
Եւ այստեղ, հեռու նանիր կապանքից,
Ես ուսանում եմ—գըտնել, ճաշակել
Ճշմարտութեան մէջ կեանք երջանկալից.
Ես ուսանում եմ—պաշտել օրէնքի
Անաչառութիւնն անկապանք հոգով,
Ականջ չը դնել անկիրթ ամբոխի
Բողոք-տրտունջին։ Եւ կարեկցանքով
Լըսել ամօթխած, երկչոտ աղերսանք,
Աղերսին տալով միշտ ջերմ արձագանք։
Ես ուսանում եմ—այստեղ աննախանձ
Նայել յիմարի կամ չարագործի
Բախտին ու փառքին—բաղմած սիգապանծ
Մեծութեան գահին անարդարացի՞...
Ո՛վ դուք դարերի պատգամախօսներ,
Ես ձե՛զ եմ այստեղ յիշում ու կոչում.
Այս վեհ մենութեան վայրումն առաւել
Բարձր է խընդաբեր ձեր ձայնը հընչում.
Նա հալածում է նիրհը ծուլութեան,

Գործի հուր ու խանդ իմ մէջ բորբոքում.
Եւ ձեր խոկումներն ստեղծագործական
Ծըլում, հասնում են իմ սըրտի խորքում։
Բայց մի սև միտք է այստեղ իմ հոգին—
Արտում թէ դաշտում այս դալարաշատ—
Սև ամպի նման, ճընշում, պաշարում.
Ա՜խ, վիշտ է միայն աչքըս տխրագին
Եւ տըգիտութեան կործանիչ արատ
Այստեղ նըշմարում...

Արցունքի առաջ խսպառ կուրացած,
Սառն ու խուլ վըկայ դառն հառաչանքի,
Բիրտ աղայութիւնն կոյր բախտից ընտրուած,
Առանց ըզգացման, առանց օրէնքի,
Այստեղ իշխում է ձեռքին գաւազան,
Եւ բըռնի դարձնում իրան սեփական՝
Խեղճ երկրագործի թէ՛ ինչք, թէ՛ վաստակ,
Տուն-տեղ ու արդիւնք, դյժ ու ժամանակ։
Ե՛ւ գործն օտարի, և՛ գութանն օտար,
Մէջքը կորացրած, լախտին հընազանդ՝
Այստեղ հերկում է ճորտութիւնն անճար

Անողոք տիրոջ հողերն արգաւանդ։
Այստեղ ամենքն էլ ծանրը լծի տակ,
Մինչի մահի դուռ տանում են կրծքում
Երկիւղից սպանուած յոյս, հակում, փափագ.
Այստեղ նորատի կոյսերն են ծաղկում
Պիղծ չարագործի վաւաշ ու մոլար
Հաճոյքի համար։
Մատաղհաս որդիք՝ օգնական գործում,
Միահ նեցուկներ ծերուկ հայրերի,
Խրոխտիթն հայրական թողած ակամայ,
Այստեղ տանջվում են, որպէս լուռ գերի,
Աղայի տան մէջ դարձած խեղճ ծառայ։
Ո՞ւր է թէ իմ ձայնն ընդունակ լինէր
Ցընցելու մրտքեր, յուզելու սրտեր.
Ա՜խ, էլ ի՞նչու ես իմ մէջ շարունակ
Վառվում, բորբոքվում, ապարդի՛ւն կրակ.
Ա՜խ, ի՞նչու չունեմ և՛ ես ահաւոր
Պերճախօսութեան տաղանդ ու շընորհ։
Ընկերնե՛ր, արդեօք կը տեսնե՞մ աչքով
Ես մի օր իմ ազգն ազատ, անհալած,

Եւ արքայական քաջայաղթ բազկով
Անարգ ստրկութիւնն իսպառ տապալած.
Եւ քեզ, հայրենի՛ք, վերջապէս, մի օր
Կը շողա՞յ արդեօք պայծառ, լուսաւոր
Ա՛յնքան փափագած, այնքան տենչայոյզ
Սուրբ Ազատութեան սիրո՞ւն արշալոյս...

ՇՈՒՏ ԱՆՑԱՆ...

Շո՞ւտ անցան, ընկե՛ր, պատրանքներն անուշ,
Սիրոյ, յոյսերի և հրպարտ փառքի.
Որպէս ծուխ, որպէս վաղորդեան մըշուշ,
Զըքացան խաղերն մեր ծաղիկ կեանքի։
Բայց դեռ եռում են մեր մէջ վառ իղձեր.
Եւ կանգնած ճընշող ոյժի առաջին,
Մենք ունկնդիր ենք անյաղ, անհամբեր,
Հայրենի երկրի սրբազան կոչին։
Մենք սպասում ենք անձուկ, յուսավառ,
Ոգեշունչ ժամին սուրբ ազատութեան.
Սպասում, որպէս մատաղ սիրահար,
Թովչ՞չ բոպէին ջերմ տեսակցութեան։

Քանի ապրում ենք, քանի վառվում ենք
Մենք ազատութեան և պատուի սիրով,
Ընկե՛ր, Հայրենի երկրին նուիրենք
Մեր սիրան ու հոգին վեհ ձրգտումներով։
Հաւատա՛—կը դայ, կը դա՛յ, անկասկած,
Շողավառ այգը բախտաբեր գարնան.
Եւ Հայրենիքը քընից սթափուած,
Ինքնակալ ոյժի բեկորների վրան
Կը գրոշմէ, ընկե՛ր,
Անունները մեր։

ԲԱԽՉԻՍԱՐԱՅԻ ՇԱՏՐՈՒԱՆԸ

ՊՈԷՄԱՑԻՑ

(ՀԱՏՈՒԱԾ)

...Հասաւ գիշերը. պատեցին ստուերներ
Փարթամ Տաւրիկի անուշակ դաշտեր.
Եւ ես լսում եմ դափնու հովանում
Հեռուից բլբուլն է անոյշ գայլայլում.
Ելնում է լուսինն աստղերի յեռքից,
Եւ շուրջ սփելով շողեր մեղմավառ,
Լուսաւորում է անամպ երկնքից
Սար, ձոր ու հովիտ, բլբուր ու անտառ։
Ահա և ճերմակ չարսաւներ վերան,
Մերթ երևալով, մերթ չքանալով,
Անցնում են, թեթև ստուերների նման,
Բախչիսարայի խուլ փողոցներով

Թաթար կին-մարդիկ. գիմում են շտապ-շտապ
Նոքա տընից-տուն, իրար այցելում,
Որ երեկոյեան ժամերը պարապ
Միատեղ անցնեն խօսք ու զրոյցներում։
Լուռ է և պալատն. հարեմն է քընած՝
Անդորը հեշտանքին անձնատուր եղած.
Եւ խաղաղ ժամը կէս-գիշերային
Խանգարող չկայ։ Արդէն ներքինին
Պահապանների
Խումբը յուսալի
Հրսկող հայեացքով աչքի անցուցած՝
Ի՛նքն էլ է արդէն քընի ծոց մըտած.
Սակայն սրբոի ահն այնքան փութաջան
Ե՛ւ քընում հանգիստ չէ տալիս նորան։
Նա ամեն մի ժամ տիրոջ հարեմում.
Կանանց նենգութեան կասկած է տանում.
Մերթ նա լսում է խուլ շշուկ ու ձայն,
Մերթ ճիչ աղաղակ—և զարթնում խաբուած,
Դողդողում ահից, մտենում դրան
Եւ երկար լսում ականջը լարած...

Սակայն ջրս բոլոր լռեռ է ամեն ինչ.
Լոկ շատրուաններ քաղցրաձայն ու ջինջ
Ցայտում են շիթեր մարմար բանտերից.
Եւ բըլբուլները սիրաշունչ վարդից
Անբաժան, անտես, խաւարի ծոցում
Սէր են զեղգեղում, սիրելում մըրցում։
Երկար լըսում է Նոյա ներքինին
Եւ նորից իրան տալիս խոր քընին...

ՄԻԽԱՅԻԼ ԻՒՐԻԵՎԻՉ ԼԵՐՄՕՆՏՈՎ

(Ծնաւ 3 հոկտեմբերի 1814 թ. վախճ. 15 յուլիսի 1841 թ.)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԵՐՄՕՆՏՈՎԻ

ՀՐԵՇՏԱԿ

Կէս գիշերային անհուն երկնքում
Հրեշտակ էր թռչում և մեղմիկ երգում.
Եւ լուսին, աստղեր, ամպեր խրմբովին
Սրբազան այդ երգն լուռ լսում էին։

Երգում էր նա բախտ և երջանկութիւն
Եղեմում ապրող սուրբ ոգիների.
Երգում էր գովեստ նա Տէր-Աստծուն,
Եւ այդ գովեստն էր անկեղծ, սրբազնի։

Մատաղ էակ էր նա գլուխին տանում
Երկրային վրշտի, արցունքի համար.
Եւ երգն հրեշտակի այդ մատաղ սրտում
Մընաց կենդանի, թէպէտ անբարբառ։

Եւ երկրիս վերայ, լեցուն փափաղով,
Երկար տառապեց այն մատաղ հոգին.
Բայց նորան երկիրն իւր ոլխուր երգով
Չը փոխարինեց երգը երկնային։

Ո՛Չ, ԱՅՆ ՔԵԶ ՉԵՄ...

Ո՛չ այն քեզ չեմ այնպէս սիրում ջերմագին,
Ինձ համար չէ սիրուն փայլը քո դէմքի.
Ես սիրում եմ քո մէջ տանջանքն իմ նախկին,
Եւ յիշատակն աւերս, մատաղ իմ կեանքի։

Երբ շատ անգամ չը քնաղ դէմքիդ նայելով,
Իմ հայեացքը աչքիդ խորքն է թափանցում,
Ես զբաղուած իմ խորհրդաւոր զրոյցներով,—
Բայց քե՛զ հետ չէ սիրտս խօսում, զրոյց անում։

Ես խօսում եմ ծաղիկ կեանքիս սիրոյ հետ,
Որ չը քացաւ այնպէս անդարձ ու անհետ.
Քո վառվռուն, ջերմ հայեացքում ու լեզվում
Ես այլ հայեացք, այլ լեզու եմ որոնում։

ՊՈԿՈՒԵՑ ԿԱՂՆՈՒ...

Պոկուեց կաղնու խըղճուկ տերևն իւր ոստիցը հարազատ,
Եւ հալածուած զոռ փոթորկից՝ գընաց, ընկաւ անապատ.
Թօշնեց այնտեղ ցուրտ ու տօթից, թափառելով շատ երկար,
Եւ, վերջապէս, Սև ծովի ափ հասաւ մի կերպ ուժասպառ։

Ծովի ափին լուռ կանգնած է դալար, մատղաշ ջինարին,
Նորա հետ է միշտ քըչփըչում, նորան շոյում զով քամին.
Նորա կանաչ թարմ ոստերին դրախտի թըռչունք խմբերով
Ծովի չըքնաղ ձուկ-թագուհու փառքն են պատմում երգերով։

Պինդ կպչում է խեղճ պանդուխտը դալար ծառի արմատին
Եւ ջինարուց ապաստան է նա աղերսում լալագին.
Նա ասում է—«Ես խըղճալիս՝ կաղնու տերև անպաշտպան՝
Ո՜հ, վաղաժամ հասունացայ օտար երկրում ցուրտ-դաժան։

«Եւ վաղուց է թափառում եմ աննպատակ ու անտէր,
Թառամել եմ, թարշամել եմ անքուն, անօթ, անստուէր.
Ա՛ռ ինձ քո մօտ, թո՛ղ զըմրըխտեայ տերևներիդ հետ ապրեմ,
Ես շատ ու շատ քեզ սքանչելի, քաղցր զրոյցներ կը պատմեմ»։

Սէգ ջինարին պատասխանեց. «Է՛հ, ի՞նչիս ես պէտքական,
Դու դեղնած ես ու փոշոտուած, զաւակներիս չե՞ս արժան.
Ինձ ի՞նչ, թէ դու գիտես զրոյցներ և տեսել ես շատ բաներ,
Առանց այն էլ ձանձրացրել են ինձ եղեմի թըռչուններ։

«Գընա, անցի՛ր, պանդխտական, ո՞վ ես, քեզ չե՛մ ճանաչում,
Տե՛ս այն արևն—նորա համար ես ծըլում եմ, կանաչում.
Այստեղ աղատ տարածվում են իմ ոստերը երկնքում,
Այստեղ ծովի սառն ալիքներ իմ արմատն են առոգում»։

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Պարզասիրտ որդին վեհ ազատութեան
Զդացման համար կեանք չէր խընայում:
Եւ յաւերժ գրծերն ազատ բընութեան
Նա կենդանագրել յաճախ էր սիրում:

Նա հաւատում էր մութ գուշակութեան,
Հաւատում սիրոյն, թալիսմաններին.
Եւ կեանքը զոհեց շատ անբնական
Նա բուռն յոյզերին, ցանկութիւններին:

Վըշտի, կրքերի և երջանկութեան
Նորա մէջ հոգին պահում էր պաշար.
Փրչե՞ց նա շունչը: Ահա գերեզման:
Մարդկանց համար չէ՞ր նա եկած աշխարհ:

ՄԵՂԵԴԻ

Ես իմ մտքում մի այլ աշխարհ ստեղծեցի,
Մի այլ գողտրիկ պատկերների գոյութիւն.
Եւ շըղթայով նոցա իրար կապեցի,
Տուի նոցա ես միայն տեսք—ոչ անուն:
Սակայն յանկարծ ձրմրան հողմը շառաչեց
Եւ իմ մտքի սըխալ շէնքը կործանեց...

Այդպէս քաշուած մի ծառի տակ ստուերախիտ,
Ուշքը տուած իւր ջունգուրի լարերին,
Աշուղն ազատ, անշահասէր, պարզամիտ,
Զբաղեցնում է զուարճամոլ ամբոխին...

Մէ՛կ էլ ուժգին նա մի ձայն է արձակում,
Նա սիրեկնի սէրն է երգում բարձրաձայն.
Բայց չունգուրի լարն է յանկարծ կըտրատվում,
Եւ լըսվում է երգի ըսկիզբը միայն...
Եւ իզո՞ւր է.ք դուք փափագում վերջաբան—
Ո՞վ կարող է սիրոյ երգին տալ վախճան...

ԵՐԲ ՄԵՂՄ ԾՓՈՒՄ Է...

Երբ մեղմ ծըփում է արտը ոսկեշող,
Դալար անտառում սօսափում քամին.
Եւ կարմրիկ սալորն անտես, գաղտագող
Պահվում է այգում, տերևի միջին։

Երբ անուշարոյր յողով թարմացած՝
Ձերմակ շուշանը այնպէս սիրալեց,
Վառ արշալուսին կամ մուրը պատած,
Ինձ ողջունում է թըփերի միջից.

Երբ սառն աղբիւրի կարկաչը ձորում
Ցուզիչ ցընորքով սիրտս պաշարած,
Ինձ խորհրդաւոր երգ է թոթովում
Այն երկրի մասին, ուր ինքն է ծընած,—

Այնժամ դաղրում է իմ յուզուած հոգին,
Մըռայլ ճակատիս թախիծը ցըրվում.
Եւ ես զգալով բախտը երկրային,
Հոգով տեսնում եմ Աստծուն երկնքում...

ՆՈՒԷՐ «ԴԵԻ» ՊՕԷՄԱՅԻՆ

Քեզ, ո՛վ Կովկաս, դաժան արքայ մայր-երկրի,
Քե՛զ եմ նորից անհոգ երգըս նուիրում.
Օրհնի՛ր նորան, իբր հարազատ զաւակի,
Տուր հովանի քո ձիւնազարդ լեռներում.
Անկասելի բախտը վաղուց իմ հոգին
Շըղթայել է քեզ հետ անվերջ ցընորքով.
Ցուրտ հիւսիսում՝ քեզ խորթ, օտար բընաւին՝
Քո՛նն եմ, Կովկաս, ես միշտ սրտով ու մտքով։

Մանուկ օրից իմ թոյլ երկչոտ քայլերով
Ձըգնում էի ելնել հըպարտ քո ժայռեր,
Որ պատած են գորշ, միգագոյն չալմայով,
Որպէս Ղօրան երկրպագող մերկ գլուխներ.

Այնտեղ հրզոր արծիւներ են գիշերում,
Այնտեղ աղատ միշտ սուլում է պաղ քամին,
Այնտեղ էի ես կարօտով սրլանում,
Սրբոտով նոցա ընկեր էի օդային։

Անցան ծանր շատ տարիներ այդ օրից,
Դու ինձ նորից տեսար ժայռոտ քո գրբկում։
Եւ քո ողջոյնն՝ աքսորեալիս հիւսիսից՝
Քաղցր էր, որպէս երբեմն մանուկ հասակում։
Եւ նա վանեց սրբոտիս խորքից տառապանք,
Հոգիս լցուց մտերմութեան արձագանք.
Եւ այժմ էլ, կիսախաւար այս երկրում
Քո մասին եմ ես միշտ երգում ու խորհում։

ԱՀՈՎ ՆԱՅՈՒՄ ԵՄ...

Ահով նայում եմ գալիք օրերին,
Նայում անցեալիս արխուր, վրշտալից,
Եւ իբր յանցաւոր պատժի առաջին,
Շուրջըս որոնում մի սիրտ կարեկից...
Եւ կը գա՞յ արդեօք փրրկարար հրեշտակ,
Որ մեկնէ նա ինձ կոչումն այս կեանքի,
Ցոյց տայ ինձ կրքի, յուսոյ նպատակ,
Ցայտնէ ինձ հրզոր կամքը երկնքի—
Թէ ի՞նչու երկինքն այնպէս դառնագին
Հարուածեց իմ վառ, խանդալից կեանքին։

Երկրին հատուցի ես տուրք երկրային,
Տուրք սիրոյ, յուսոյ, բարւոյ, չարութեան—
Եւ պատրաստ անձս տալ մի այլ կեանքին՝
Լուռ սպասում եմ բաղձալի ժամուան...

Ահա և այդ ժամն... Բայց ես աշխարհում
Չեմ թողնիլ ոչ մի եղբայր հարազատ.
Ցուրտ ու խաւար է իմ կրծքում տիրում,
Աւաղ, ես արդէն յոգնած եմ, հիւանդ...
Եւ որպէս անհիւթ, վաղաժամ հասած
Մի կրժգոյն պըտուղ, իմ խըղճուկ հոգին
Թօշնել է կեանքի արևից կիզուած,
Բախտի խռովայոյզ փոթորկի միջին...

Ո՛Չ, ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ...

Ո՛չ, ես չեմ ուզում, որ խորհրդաւոր
Իմ կեանքի վէպը յայտնուի աշխարհին.
Տէրն ու խիղճըս են միայն դատաւոր
Ե՛ւ իմ վառ սիրոյն, և՛ իմ տանջանքին։

Եւ նոցա առաջ սիրտըս կը բացուի,
Ցոյս դրրած նոցա ջերմ կարեկցութեան.
Եւ թող նա միայն, թող նա ինձ պատժի,
Ով վերաս դրրաւ տանջանքի շղթան։

Մարդկանց անարգանք, մարդկանց նախատինք
Անշո՞ր են վըսեմ հոգին վըրդովել։
Թո՛ղ դոռայ ծովի կատաղած ալիք—
Անշո՞ր է կանգուն ժայռը կործանել։

Նորա ճակատն է ամպերի միջին—
Մբռնյալ բընակիչ երկու տարերքի.
Եւ միայն ահեղ որոտ-փոթորկին
Պատմում է նա միշտ խորհուրդը մըռքի։

ՔԵԶ ՄԻ՛ ՀԱՒԱՏԱՐ

(ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Քեզ մի՛ հաւատար, երազուն կեանքով ապրող պատանի՛,
Եւ միշտ երկնչի՛ր ոգեւորութեան վառվռուն բոցից...
Այդ բոցն է՝ երազ, ծանրը զառանցանք քո հիւանդ սրբոի,
Կամ բուռը զայրոյթ՝ ծընած քո սարուկ, կաշկանդուած մըռքից.
Եւ մի՛ որոնիր երկնային նըշան իզուր նորանում—
Այդ քո մէջ առատ եռում են ոյժեր, բորբոքիչ արիւն.
Փութա՛ դու արագ սպառել քո կեանքը դառըն հոգսերում,
Վըշտի, տանջանքի թոյնով աւերի՛ր դու քո գոյութիւն։

Թէ քեզ պատահի մի նուիրական, սքանչելի ժամին
Բանալ քո սրտում, քո համբը սրտում, անապակ, մաքուր
Մի անյայտ աղբիւր, ուր պարզ ու անոյշ հընչելիս լինին
Ոգեւորութեան, բարախուն կրծքի ձայներ քաղցրալուր,—

Ականջ մի՛ դընիր, մի՛ յափշտակուիր դու այդ ձայներով,
Եղի՛ր անտարբեր և նոցա իսպառ տուր մոռացութեան.
Ո՛չ ցուրտ խօսքերով, օ՛չ հարթ, համաչափ, կոկուած երգերով,
Հաւատա՛ դու ինձ, նոցա խորհուրդը չես մեկնիլ մարդկան։

Թէ յանկարծ գաղտուկ վիշտ կը մերձենայ սրբոտիդ խորանին,
Թէ խանդն ու կիրքը նորան կը յուզեն ահեղ փոթորկով,—
Մի՛ եկ ասպարէզ. մարդկանց մեծաշուք, ուրախ խընջոյքին
Դու մի՛ մասնակցիր քո միտկ ընկեր—փոթորկուած հոգով։
Քեզ մի՛ ստորացնիր։ Ամաչի՛ր հոգոյդ բարկութիւնն ուժգին
Կամ համր ու հրլու թախիծը կրծքիդ հանել վաճառքի.
Ամաչի՛ր սրբոտիդ վէրքն ու շարաւը ցոյց տալ ամբոխին,
Եւ հրպարտութեամբ վաստակել ցոյցեր մարդկանց զարմանքի։

Մեզ ի՞նչ փոյթ, ասա՛, թէ դու տանջուել ես և կամ չես տանջուած,
Մեզ ի՞նչ փոյթ, թէ քեզ անվերջ մաշում է յուզմունք հոգեկան.
Մեզ ի՞նչ փոյթ՝ գիտնալ անմիտ քո յոյսերն անցած, խորտակուած,
Տեսնել—չարաթոյն ցաւակցութիւնդ բանականութեան.
Նայի՛ր, տե՛ս, ի՛նչպէս երգով, ծիծաղով առաջ է գընում
Ուրախ ամբոխը՝ բըռնած մշտական իւր անշեղ ուղին.

Զուարթ դէմքերին հաղիւ է հոգսի մի հետք նըշմարվում,
Զե՛ս տեսնում երբէք անվայել արցունք ոչ ոքի աչքին։

Մինչդեռ հաղիւ թէ գտնես դէթ մէկին դու նոցա միջում,
Որ ծանրը վըշտից, վաղահաս հոգսից մաշուած չը լինի.
Նոքա բոլորն էլ տարաժամ ծեր են և ընկճուած կեանքում,
Բոլորն էլ արդէն արբել են թոյնը ծանրը յանցանքի.
Հաւատա՛, նոցա ցընորք են թւում քո լացն ու տանջանք,
Եւ ծաղրելի ես դու նոցա աչքում քո վարժ երգերով,
Որպէս երեսը ներկերով նախշած մի քաջ ողբերգակ,
Որ բեմի վերայ օդն է սըղոցում իւր թըղթէ սրրով...

ՄԵՌԵԱԼԻ ՍԵՐԸ

Փոյթ չէ, թէ, ընկեր, սառն հողի տակին
Գտայ ապաստան.
Մի՞շտ և ամե՞ն տեղ քեզ հետ իմ հոգին
Կլինի յաւիտեան։
Քաղցրը մոռացման, քաղցրը հանգստի
Աշխարհ վերացած,
Եւ այնտեղ յոյզերն սիրոյ ու վրշտի
Ես չեմ մոռացած։

Անվախ թողնելով երկունքի ժամում
Թէ՛ քեզ, թէ՛ աշխարհ,
Հոգիս տենչում էր, որ դար անջատում—
Անջատում չը կա՞ր։
Ես տեսնում էի երկնային ոգիք,
Ցրխրում, հառաչում,

Որ քեզ նոցա մէջ, ընկեր գեղեցիկ,
Չէի ճանաչում։

Ինձ լ՞ուչ, թէ հրաշալի փայլում է երկինք,
Դրախտն է սրբազա՞ն.
Այնտեղ տարել եմ երկրային ես կիրք՝
Ինձ հետ անբաժան։
Եւ ամենուրեք ես փայփայում եմ
Նորան իմ կրծքում.
Լալիս, կարօտում ու նախանձում եմ,
Ինչպէս անցեալում։

Թէ յանկարծ օտար համբոյր է խաղում
Քո վառ այտերին,
Համբը տանջանքով յուզվում է, դողում
Իմ սիրող հոգին.
Թէ երբեմն օտար մի անուն տալով,
Դու նիրհ ես մտնում.
Ո՜հ, այդ անունը կրքակ դառնալով,
Կուրծքս է այրում։

Ո՛չ, դուք չըպէտք է սիրես ուրիշին,
Երբէք, յաւիտեա՜ն.
Սըրբազան ուխտով, ընկե՛ր թանգագին,
Դու ի՛մն ես միայն։
Եւ, աւա՜ղ, քո լաց, քո աղերսն ու վախ
Իզո՞ւր են, հոգեակ.
Ինձ չե՛ն հարկաւոր ո՛չ օրեր խաղաղ,
Ո՛չ անդորր վիճակ։

ՄՈՒՐԱՑԿԱՆ

Սըրբավայրի դըռան առաջ
Կանգնած էր մի մուրացկան.
Քաղցած, ծարաւ, լալահառաչ,
Եւ սպասում օգնութեան։

Վշտահայեաց և ցաւագին
Նա լոկ հաց էր աղերսում.
Բայց ծաղրելով մէկը խեղճին,
Մի քար դրեց նրա ձեռքում։

Այդպէս էլ ես ցաւով-լալով
Խընդրում էի քեզնից սէր,
Բայց դու, աւա՜ղ, ինձ ծաղրելով,
Խորտակեցի՛ր իմ յոյսեր...

ՏԽՈՒՐ ԵՄ, ՏՐՏՈՒՄ...

Տրխո՞ւր եմ, տրրտո՞ւմ և չը կայ ոչ ոք, որին ձեռք պարզեմ
Կեանքիս խռովայոյզ, դառնաղետ ժամուն:
Իղձե՞ր... Բայց, աւա՜ղ, անվերջ իղձերով սիրտըս ի՞նչ յուզեմ,
Երբ վառ տարիքս էլ զընո՞ւմ են, սահո՞ւմ...

Սիրե՞լ... Մակայն ո՞ւմ... սիրել կարճատև—չարժէ բընաւին.
Իսկ անվերջ սիրել—ո՞հ, չէ՛ կարելի.
Սրտիս եմ նայում—այնտեղ և՛ հրճուանք, և՛ վիշտ է ինչին,
Այնտեղ հետք անդամ չըկայ անցեալի:

Կրքե՞լ... Բայց չէ՞ որ կրքերն էլ վաղ-ուշ իրենց յուզմունքով
Անհետ ըմհ կերթան բանականութեան.
Եւ կեանքը, օ, երբ նայում եմ իմ շուրջ սառըն հայեացքով—
Ի՞նչ փուչ ու անմիտ կատակ է միայն...

ՔԵ՛Զ ԷԻ ՊԱՏՄՈՒՄ...

Քե՛զ էի պատմում ես մի ժամանակ,
Ալեյոյզ սրտիս երազներն, հոգեակ.
Ես աղքատ էի—դու այդ գիտէիր,
Բայց դու աղքատիս մենակ չը թողեր:

Եւ դու հաշտեցրիր վիճակս ու հոգիս,
Ես խոնարհուեցայ յուզուող կրքերիս.
Քեզանով միայն, ընկե՛ր սիրելի,
Դարձեալ այն եղայ, ինչ առաջ էի:

Եւ ոգևորիչ իմ մուսան նորից
Լըսեց իմ աղերսն, իջաւ սուրբ սարից.
Բայց, օ, հաւատա՛, քո՞նն են, իմ անգի՛ն,
Ե՛ւ նորա պարգևն, և՛ նորա դափնին:

ԵՐԲ ԿԵԱՆՔԻՆ...

Երբ կեանքին վերջին հրաժեշտ տալիս,
Այսաեղ, մարդկանցում կը թողնեմ միայն
Լոկ յիշողութիւն մոլար կրքերիս,
Փոխանակ շքեղ, փառաւոր անուան.

Երբ ցուրտ հողի տակ կը նիրհէ հանգիստ
Այն սիրտը, ուր ջերմ արիւնն էր եռում,
Ուր այնպէս իզուր, ուր այնպէս անմիտ
Սէրն ու թշնամանք կռիւ էին մղում.

Երբ հասարակաց վրձռով մեղապարտ,
Դու գլուխ խոնարհած՝ կը լռես խսպառ.
Եւ անմեղ քո սէրն, այդ սէրն անարատ,
Ամօթ, նախատինք կլինի քեզ համար,—

Նա, ով կրքերով ու արատներով
Քո պայծառ կեանքը մատնեց խաւարին,
Օ՜հ, աղերսում եմ, կրծու խօսքերով
Նորան մի՛ յիշեր այդ տրխուր ժամին։

Բայց երբ կը կոչէ քեզ ամբոխն ատեան,
Ասա՛—մեղ դատող կայ մի այլ Էակ,
Որից գընել ես յանցանքիս ներման
Սուրբ իրաւունքը՝ կրբելով տանջանք...

ԱՂՕԹՔ

Կեանքիս դժուարին, ծանրը բոպէին
Թէ լուռ թախիծ է ճնշում իմ հոգին.
Ես աղօթում եմ: միայն սրբբազան
Աքանչելի աղօթք մրմնջում բերան:

Եւ սուրբ աղօթքում այնքան ներդաշնակ
Կայ հրգոր մի ոյժ, մի ոյժ կենսառաք.
Կայ ոգևորիչ մի գեղեցկութիւն,
Մի անմեկնելի, սուրբ գեղեցկութիւն:

Եւ աղօթելիս՝ ես նորոգվում եմ,
Կասկածը հեռու, հեռու է փախչում:
Ե՛ւ հաւատում եմ, և՛ արտասվում եմ,
Ե՛ւ այնպէս թեթև՜ ու թեթև՜ շընչում:

ՄԱՐԳԱՐԷ

Այն օրից, երբ Տէրն յաւերժ, երկնաւոր
Ինձ մարգարէի պարգևեց շընորհ,
Ես խոր կարդում եմ, կարդում էջ առ էջ,
Արատ ու չարիք մարդկանց աչքի մէջ:

Ես ըսկսեցի քարոզել մարդկան
Ե՛ւ սէր, և՛ ուսմունք սուրբ ճշմարտութեան.
Բայց զինուած իմ դէմ իմ մերձաւորներ,
Մոլեգին վերաս նետեցին քարեր:

Մոխիր ցանեցի գըլխիս — ու աղքատ
Ես քաղաքներից փախայ անապատ.
Այնտեղ ապրում եմ դոհունակ կեանքով,
Որպէս թռչուններ—Տիրոջ բարիքով:

Այնտեղ Բարձրեալի պատուէրը պահած,
Ինձ խոնարհվում է ամեն արարած.
Այնտեղ և՛ աստղեր երթերի միջից
Խնդագին փայլով ունկնդիր են ինձ։

Բայց երբ անցնում եմ արագ քայլերով
Ես աղմկալից քաղաքի միջով,
Ցոյց տալով վերաս՝ ինքնասէր, սիգանձ
Ժըպտում են ծերերն ու ասում մանկանց.

«Նայեցէ՛ք, ահա ձեզ լա՛ւ օրինակ,
Գոռոզ էր. մեզ հետ չը վարեց հաշտ կեանք.
Անմիտն ուզում էր համոզել մարդկանց,
Որ նորա լեզուով խօսում է Աստուած։

«Նայեցէ՛ք, որդի՛ք, դուք նորա վերայ,
Ի՞նչպէս և՛ մրուա՞յլ, և՛ դունա՞տ է նա,
Ի՞նչպէս նիհա՞ր է, մե՞րկ, անօգնակա՞ն,
Ի՞նչպէս ամենքն էլ ատո՞ւմ են նորան»։

X ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ...

Ես սիրում եմ, երբ սրբոտի հետ մի ներքին
Կռիւ մղելով՝ կոյսն է շեկնում, վարդի պէս.
Այդպէս և մերձ՝ ըսպասելով փոթորկին,
Վերջալոյսն է շառագունում հրբակէզ։

Ես սիրում եմ, երբ գիշերին լուսնավառ,
Անտառի մէջ կոյսն է յուզուած հառաչում.
Այդպէս խօսուն և՛ տաւիղն է ոսկեվար
Մեղմ նուագով պաղ քամու հետ շըշընջում։

Բայց առաւել հրմայի՜չ է իմ աչքին
Կուսի արցունքն, երբ աղօթք է նա անում.
Այդպէս վըկայ և՛ Փըրկչի լուռ տանջանքին,
Քերովբէն էր անմեղ լալի՜ս, վըշտանո՜ւմ։

ԾՈՎԱՐՔԱՅԻ ԱՂՋԻԿԸ

(ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Արքայորդին ծովի ջրում նրժոյգ-ձին է լողացնում,
«Արքայորդի՛, նայի՛ր վերաս»—յանկարծ մի ձայն է լսում։

Քընչում է ձին, ականջ սրում, դանդուր բաշը շարժելով,
Ցառաջ լողում, ծովը ճեղքում, ջրի ցոլքեր շաղ տալով։

Եւ նոյն ձայնն է նորից հասնում արքայորդու ականջին.
«Ծովարքայի աղջի՞կ եմ ես, գիշերն անցնե՞նք միասին»։

Ահա մի ձեռք, սիրուն մի ձեռք ջրի միջից երևաց,
Եւ ձգնում է բռնել փունջը՝ մետաքս-սանձից կախ ընկած.

Ցեղոյ սիրուն մի գըլխիկ է ելնում խաղուն ջրերից,
Ծովի խոտն է խըճճուելով՝ կըպչում երկայն մազերից։

Սէր է վառվում, սէր է փայլում կուսի կապոյտ աչերում,
Պարանոցին, մարգարտի պէս, կաթիլներ են շողշողում։

«Օ՜, սպասի՛ր, քեզ ցոյց կը տամ»—արքայորդին մըտածեց,
Եւ շուտափոյթ ձեռքը տարաւ, ծամին հասաւ ու բըռնեց։

Բըռնեց ամո՞ւր։ Զօրեղ ձեռքը ո՛չ դող գիտէ, ո՛չ ցընցում...
Իսկ խեղճ գերին և՛ դողում է, և՛ աղերսում, և՛ լացում։

Անահ հերոսն առաջ լողաց, լողաց, ծովափ դուրս ելաւ,
Ելաւ ցամաք, և խրոխտագին ընկերներին ձայն տուաւ.

«Եկէ՛ք, եկէ՛ք, քա՛ջ ընկերներ, որս եմ բըռնել ես ծովում,
Նայէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչպէս խեղճը թըրթպըրտում է ու դողում։

«Չը՛, ի՞նչ եղաւ, ի՞նչ էք կանգնել այդպէս սառած ու ապշած,
Մի՞թէ այսպէս գեղեցկութիւն ձեր կեանքում հէչ չէ՞ք տեսած»։

Ու յետ նայեց արքայորդին և, ի՜նչ տեսնի, Տէ՛ր Աստուած,
Աչքը մըթնեց, տեղնուտեղը ի՛նքն էլ մընաց քար կըտրած.

Տեսաւ—փայլուն, ոսկէաւաղ ծովեզերքին տարածուած՝
Կանաչ պոչով մի չքտեսնուած ծովի հրբէշ է ընկած.

Պոչն է պատած օձամաշկով։ Եւ հրբէշը փորսողում,
Ամբողջ մարմնով թալկանում է, և՛ գալարվում, և՛ դողում.

Եւ ճակատից, որպէս աղբիւր, փրփուր, քրքտինք է վազում,
Մահու խաւար դէմքը պատում, աչքի լոյսը նուազում.

Եւ դողդողջուն, դունատ ձեռքերն թոյլ բռնում են աւազից,
Մութ, անորոշ նախատինք է լսվում նորա շրթունքից։

Ցուն է դառնում արքայորդին լուռ, մրտախոհ ու փոշմանն...
Դեռ շատ ու շատ նա կը յիշէ ծովարքայի աղջկան։

ԸՆԿԵՐԻՆ

Ոգեորութեան գրքում փայփայուած՝
Երբէ՛ք իմ աշխոյժ, մշտավառ հոգին
Երկնային փայլով չէ՞ հրբապուրուած.—
Ես միշտ սիրել եմ հիացքն երկրային։
Եւ կանցնի, ընկե՛ր, կը կորչի իմ սէր,
Որպէս խաբուսիկ երազի ըստուէր.
Եւ ես երջանիկ երբէ՛ք չեմ լինիլ
Նաղելուս կողքին։ Բայց ո՞վ է արդեօք
Սրբտիս ընտրեալը—այդ մի՛ հարցընիլ
Նորան չը պէ՛տք է ճանաչէ ոչ ոք։
Մեղ ճակատագիրն անջատեց յաւէտ,
Ա՜խ, նորան յաղթել ես ոյժ չունեցայ.
Բայց քէնն ու մերժումն ի՛մ մէջ են, ի՛նձ հետ,
Եւ իմ սիրոյ մէջ ես ունակացայ։

Այդպէս ծեր գողը քաշուած խուլ անտառ,
Անզղջում թաղուած իւր շատ մեղքերում,
Դեռ նա սպառնանք է ճամբորդի համար,
Եւ սիրով արնոտ դաշոյնն է սրբում...
Մանկութեան գրկից մինչ մահու դագաղ,
Որպէս խաղալիկ բախտի ու կրքի,
Մարդկանց ամբոխը ձրգտում է դանդաղ
Մի անմեկնելի, սուրբ նպատակի...
Ե՛ս էլ անցեալում դէպ վրսեմն էի
Թռչում և՛ հոգով, և՛ վառ մտքերով.
Բայց ինձ առաւել քաղցր է, սիրելի՜
Երկրային տանջանքն իւր յուզումներով.
Եւ այդ տանջանքին սովոր եմ այնքան,
Որ նա միշտ ինձ հետ կապրէ անբաժան...

— ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ

Ասա՛ ինձ, ոստ, Պաղեստինի,
Ո՞ւր ես բուսել, ո՞ւր—ծաղկել.
Ո՞ր բըլուրի կամ ո՞ր հովտի
Զարդարանք ես դու եղել:

Արևա՞լքն է արդեօք շոյել
Քեզ իւր շողով ոսկեվառ,
Եւ Յորդանան բունըդ ցօղել
Իւր ջըրերով զովարար.

Թէ՞ քամին է աղմկելով
Խոր գիշերուայ խաւարում,
Քեզ օրօրել լի ցասումով
Լիբանանու լեռներում.

Աղօթք էին արդեօք ասում,
Թէ՞ երգ երգում վաղեմի,
Երբ քո սաղարթն էին հիւսում
Խեղճ որդիքը Սաղեմի։

Եւ կա՞յ դեռ այն արմաւենին
Լայնատերև զանգուրով,
Անցորդներին նա տապ օրին
Պարգևո՞ւմ է հով ու զով.

Թէ՞ քեզ նըման, նա՛ էլ թօշնել
Անջատման մէջ հէգ, տըրտում։
Եւ սաղարթն է նորա դեղնել
Հովի փոշուց անկշտում...

Ասա՛, ո՞ւմ ձեռքն Աստուածավախ
Քեզ բերել է այս աշխարհ.
Տըխրե՞լ է նա արդեօք յաճախ,
Եւ ջերմ լացել քեզ համար.

Թէ՞ նա Տիրոջ զինուոր էր քաջ,
Ճակտին կընիք մսքրութեան.
Մարդկանց միջում, Աստծոյ առաջ
Նա՛ էլ քեզ պէս, երկնարժա՞ն։

Խնամուած անտես՝ դու կանգնած ես,
Հանդէպ այս սուրբ պատկերի,
Հաւատարիմ պահնորդի պէս,
Ո՞ստ սրբբազան աշխարհի։

Կիսախաւա՞ր, կանթեղե՞ լոյս,
Խա՞չ, տապանա՞կ—սո՛ւրբ նըշան...
Ո՞ղջ շնչում են խինդ, սէր ու յոյս
Քո չորս բոլո՞ր, քո վերա՞ն։

ԻՄ ՏՈՒՆԸ

Այնտեղ է իմ տուն-օթևանն, ուր երգեր են միշտ հընչում,
Ուր կայ երկնից լոյս կամար.
Եւ ամեն ինչ, որ կեանք ունի, ապրում է այդ տան միջում,
Եւ նա նե՞ղ չէ ինձ համար։

Նորա կըտուրն հըսկայական—նա հասնում է աստղերին.
Մէջն ապրողը պարզ աչքով
Անկարող է պատից պատը չափել նորա ձի՞գ ուղին—
Պէտք է չափէ նա հոգով։

Ճշմարտութեան կայ զգացմունք—յաւերժի սե՛րմ սըրբազան,
Որ ապրում է մեր կըրծքում,
Ե՛ւ հոսանքն է ժամանակի, և՛ տարածքը անսահման,
Նա կարծ վայրկեան ընդգըրկում։

Եւ այդ վըսեմ զգացմունքի համար Տէրն է երկնաւոր
Իմ ճոխ տունը կառուցած.
Եւ այնտեղ է թէ խո՞ր տանջանք, թէ հոգեկան քա՞ղցր անդորը
Բանաստեղծին վիճակուած։

ԺԱՅՌ

Վիթխարի ժայռի լերկ կըծքի վերան
Ոսկի ամպիկ էր հանգիստ գիշերում.
Եւ երբ լոյս ծագեց—վաղ առաւօտեան
Նա զուարճ խաղով սահեց եթերում։

Բայց ծերուկ ժայռի կըծքին խորշոմած
Ոսկի ամպիկից խոնաւ հետք մընաց.
Եւ ահա մենակ, խորախոհ, տըրտում
Մեղմ արտասվում է ժայռն անապատում...

ԿԱԼԱՆԱՒՈՐ

Ա՜խ, բաց արէք իմ մութ բանտի
Փակ դըռները—տուէ՛ք լոյս.
Տուէ՛ք ինձ մի սեաբաշ ձի,
Եւ սեաչեայ մատաղ կոյս.
Մատաղ կուսին պինդ գըրկելով,
Առաջ մի ջերմ կը պաչեմ.
Հապա դէպ դաշտ, ձի նըստելով,
Ես քամու պէս կը թըռչեմ։

Բայց, ա՛խ, բարձր է իմ պատուհան,
Բանտիս դըռնին՝ պի՜նդ փականք.
Եւ հեռու է կոյս-սեաչեան,
Քաշուած իւր ձոխ ապարանք.

Եւ բարի ձին կանաչ դաշտում
Մենակ, անսանձ արածում,
Ե՛ւ խնդում է, և՛ թրռչկոտում,
Ե՛ւ պոչն օդում խաղացնում։

Ես մենակ եմ—տրխուր, դարդոտ,
Իմ չորս բոլոր—մերկ պատեր.
Լոկ կանթեղն է շուրջըս աղօտ
Սփռում մարող, թոյլ շողեր.
Եւ լսում եմ, լըսո՞ւմ միայն
Գիշերային լուռ ժամում—
Լուռ պահնորդի քայլերի ձայն
Բանտիս դրռան ետևում։

ԿԱԶԲԵԿԻՆ

Հեռաւոր երկրից՝ ջերմ, մրշտագարուն,
Հայրենի հիւսիս ուղղած իմ ճամբան,
Ես քե՛զ եմ, Կազբէ՛կ, բերել իմ ողջոյն,
Քե՛զ, Արևելքի կարող պահապան։

Դարերից ի վեր ճերմակ չալմայով
Պատած, ո՛վ հրսկայ, քո կըն ճռոտ ճակատ.
Զե՛ն յուզում բընաւ հանդիստդ անվրդով
Մարդկային զոռող տըրտունջ ու դանդատ։

Բայց սրբոտիս աղերսն մեղմի՛կ, կաթոգի՛ն
Թո՛ղ տանեն, հասցնեն քո հրսկայ ժայռեր
Մըշտընջենական Ալլահի գահին—
Աստղերից վերև, քո տիրած եթեր։

Թո՛ղ, աղերսում եմ, զովությունն օրուայ
Պատէ տապ հովիտ և փոշոտ ուղին,
Որ հանդիստ առնեմ ես քարի վերայ
Ամայի վայրում, կէսօրուայ ժամին։

Թո՛ղ, աղերսում եմ, զինուած, սպառնալի
Քո դռռ փոթորկին ես չը հանդիպեմ,
Երբ խորունկ կիրճում մըռայլ Դարեալի
Իմ յոգնած ձիով անցնելիս լինեմ։

Բայց դարձեա՛լ մի իղձ ունեմ ես սրտում...
Կապվո՞ւմ է լեզուս... դողո՞ւմ եմ ահից...
Մի՞ գուցէ... արդէն հայրենի երկրում
Ինձ մոռացել են աքսորման օրից։

Արդեօք կը գտնե՞մ ես այնտեղ նախկին
Ե՛ւ սիրոյ գըրկանք, և՛ ջերմ համբոյրներ.
Եւ կը ճանաչե՞ն լը.քեալ պանդըխտին
Մ՚յսքան տարուց յետ՝ եղբայր ու ընկեր.

Թէ՞ լուռ շարքերում յուրտ շերիմների
Ինձ սպասում են ածիւններ նիրհած
Բարի, բուռնեռանդ այն էակների,
Որոնց հետ մատաղ կեանք եմ անցուցած։

Ո՞հ, թէ այդպէս է... շտապի՛ր, ո՛վ Կազբէկ,
Փըչի՛ր բուք-բորան, ինձ տակովն արա՛.
Եւ իմ ածիւնն էլ անտէր, անուրեք
Կիրճում չորս բոլոր սփռի՛ր անխընայ...

ԱՌԱԳԱՍՏ

Մէգով պատած ծովի վերայ կապուտակ
Առագաստն է ահա լողում մեն-մենակ...
Ի՞նչ է փնտրում նա այն հեռու վայրերում,
Ի՞նչ է թողել նա հայրենի աշխարհում։

Եւ խաղում են ալիքները հողմահար,
Կայծն է թեքվում ու ճրռնչում անդադար...
Բայց նա, աւա՜ղ, ո՛չ բախտի է մեն գալիս,
Ո՛չ էլ բախտից երես դարձնում, խոյս տալիս։

Նորա վերև — ոսկեճաճանչ արեգակ,
Նորա ներքև — ջրերը լազո՜ւր ու յըստակ.
Բայց նա խրոով՝ փոթորիկ է փափագում,
Կարծես հանգիստ պահուա՜ծ լինի փոթորկում։

ԹԱՄԱՐ

Դարեալի խորունկ, միգապատ կիրճում,
Ուր Թերեք գետն է յուզվում, մրռնչում,
Կանգնած մի մրոայլ դըղեակ հընօրեայ,
Սևին էր տալիս՝ սև ժայռի վերայ։

Դըղեակն այն դատարկ, բարձրաշէն ու նեղ—
Թամար Թագուհին ապրում էր այնտեղ,
Գեղեցի՜կ, որպէս հրեշտակ երկնային,
Նենգամի՜տ ու չա՜ր, որպէս չար ոգին։

Եւ կէս գիշերուայ մըշուշի միջից
Ոսկեշող լոյս էր ցոլում դըղեակից.
Անցորդի ուշքն էր նա հրապուրում,
Ե՛ւ նինջ, և՛ հանգիստ նորան խոստանում։

Եւ մեղմ լսվում էր մի ձայն տենչալի,
Ախտայոյզ ձայնը չքնաղ Թամարի.
Եւ կար այդ ձայնում մի թովչանք քընքոյշ,
Կար և անմեկին, յաղթական մի ոյժ։

Անտես փերիի ձայնից հրմայուած՝
Հովիւ, սովդաքար, մարտիկ զինաղդեաց
Դիմում էր դրդեակ — և ժանդ նետքինին
Բացում էր դրռներն եկող հիւրերին։

Փետրալից մահճում, թաղուած մետաքսում,
Այնտեղ Թամարն էր հիւրին սպասում,
Վերան ակ, գոհար — և գինով լցրած
Երկու հատ գաւաթ առջևը դրրուած։

Եւ փարում էին ձեռքեր ջերմագին,
Հրպվում վառվռուն շրթունք շրթունքին.
Եւ ախտաբորբոք, վայրախինդ ձայներ
Դադար չունէին այնտեղ ողջ գիշեր։

Ասես, դրդեակում այն լուռ, ամայի
Հարիւրով վառսիրտ աղջիկ, պատանի
Եկած լինէին հարսանեաց հանդէս,
Կամ հարուստ թաղման կատարում մի ծէս։

Բայց հէնց որ լոյսը վաղ առաւօտեան
Սփռում էր շողեր լեռների վերան,
Մութն ու լռութիւն պատում էր կրկին
Մի ակնթարթում մռայլ դրդեակին։

Միայն Թերեքն էր Դարեալի խորքում
Անդորրութիւնը խռովում, աղմկում.
Ալիքի եռքից ալիքն էր վազում,
Ալիքն ալիքին հասնել էր ուզում։

Եւ տանում էին իրանց հետ արագ
Նոքա ողբալով անմռունչ դիակ.
Եւ մէկն այդ ժամին սպիտակին տալով՝
Կանչում էր հեռուից. «ախ, մընաս բարով»։

Եւ մեղմ լսվում էր մի ձայն տենչալի,
Ախտայոյզ ձայնը չքնաղ Թամարի.
Եւ կար այդ ձայնում մի թովչանք քընքոյշ,
Կար և անմեկին, յաղթական մի ոյժ։

Անտես փերիի ձայնից հրմայուած՝
Հովիւ, սովդաքար, մարտիկ զինազգեաց
Դիմում էր դրդեակ — և ժանդ նետքինին
Բացում էր դրռներն եկող հիւրերին։

Փետրալից մահճում, թաղուած մետաքսում,
Այնտեղ Թամարն էր հիւրին սպասում,
Վերան ակ, գոհար — և գինով լցրած
Երկու հատ գաւաթ առջևը դրրուած։

Եւ փարում էին ձեռքեր ջերմագին,
Հրպվում վառվռուն շրթունք շրթունքին.
Եւ ախտաբորբոք, վայրախինդ ձայներ
Դաղտար չունէին այնտեղ ողջ գիշեր։

Ասես, դրդեակում այն լուռ, ամայի
Հարիւրով վառսիրտ աղջիկ, պատանի
Եկած լինէին հարսանեաց հանդէս,
Կամ հարուստ թաղման կատարում մի ծէս։

Բայց հէնց որ լոյսը վաղ առաւօտեան
Սփռում էր շողեր լեռների վերան,
Մութն ու լռութիւն պատում էր կրկին
Մի ակնթարթում մրռայլ դրդեակին։

Միայն Թերեքն էր Դարեալի խորքում
Անդորրութիւնը խռովում, աղմկում.
Ալիքի հաքից ալիքն էր վազում,
Ալիքն ալիքին հասնել էր ուզում։

Եւ տանում էին իրանց հետ արագ
Նոքա ողբալով անմռունչ դիակ.
Եւ մէկն այդ ժամին սպիտակին տալով՝
Կանչում էր հեռուից. «ա՜խ, մինա՜ս բարով»։

Եւ ժամն անջատման այնքան էր քընքոյշ,
Եւ ձայնն էր հընչում այնքան մեղմ, անոյշ,
Որ կարծես կըրկի՛ն խոստանում լինէր
Նոր տեսակցութեան հիացմո՞ւնք ու սէ՞ր...

ՆԺԴԵՀԻ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ Տիրամայր, այսօր իմ ջերմ աղօթքով
Քո լուսազարդ, սուրբ պատկերիդ յանդիման
Ես կանգնած եմ ո՛չ փրկութեան փափագով,
Ո՛չ գոհ սրբոով, ո՛չ աղերսով քաւութեան.

Զե՛մ աղօթում ես իմ անտէր, ամայի
Կեանքիս համար՝ վըտարանդի՛, վըշտաւո՛ւտ.
Ջերմ պաշտպանիդ այս ցըրտաշունչ աշխարհի
Ես ուզում եմ յանձնել մի կոյս անարատ։

Պահի՛ր նորան՝ շըջապատած լի՛ բախտով,
Տո՛ւր կեանքի մէջ ուղեկիցներ ուշադիր.
Ե՛ւ լոյս գարուն, և՛ ծերութիւն անվըրդով,
Ե՛ւ խաղաղ յոյս—անչար սրբոին պարգևի՛ր։

Ե՛րբ էլ լինի նա թողնելու այս երկիր—
Լուռ գիշերին թէ լեղամուկ առաւօտ, —
Զբաղնաղ հոգին ընդունելու առաքի՛ր
Դու լաւագոյն հրեշտակիդ նորա մօտ...

„ԻՍՄԱՅԷԼ ԲԷՅ“

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԷՊԻՑ

(ՀԱՏՈՒԱԾ)

I.

Քե՛զ եմ, քե՛զ իմ ջերմ ողջոյնը բերում,
Ալեոր Կովկաս։ Ես քո լեռներում
Օտար ճամբորդ չեմ։ Մանկութեան օրից
Նոքա ճանաչել, փայփայել են ինձ,
Եւ ընտելացրել իմ մատաղ հոգին
Քո խուլ վայրերին, քո վառ երկնքին.
Եւ միշտ այդ օրից ցընորքս է եղած
Հարաւի երկի՜նքն, լեռնե՛ր սեպացած։
Գեղեցի՜կ էք դուք, ո՛վ ազատութեան
Մըշտընջենաւոր, անսասան զահեր,

Երբ, ծուխի նման կապուտակ ամպեր,
Թռչում, գալիս են իրիկնադէմին
Հեռուից դէպի ձեզ — և ձեր գլխներին
Ճախրում, շըշընջում, ստուերների նման.
Եւ կապուտակում անեզը, անսահման
Շըրջան է առնում պանդուխտ, միայնակ
Նաղելի՜ լուսնեակ։

II.

Օ՜հ, իմ վե՛հ Կովկաս, ես սիրում էի
Ռազմատենչ բարքերն քո զաւակների.
Սիրում երկնքիդ կապուտակն անհուն,
Եւ այն սքանչելի, ահեղ մրռնչիւն
Քո յանկարծահաս փոթորիկների,
Որոնց չորս կողմից միշտ ձայն են տալի
Խորո՜ւնկ քարայրեր, սե՛պ-սե՛պ բըլուրներ,
Որպէս գիշերուայ քաջ պահապաններ...
Բայց մէ՜կ էլ տեսար փայլեց արեգակ,
Եւ ոսկեզօծեց հեղեղատն արագ.

Եւ տափաստանի ծաղիկն անուշիկ
Դէպի վեր ուղղած իւր հոտոտ գըլխիկ,
Շողում է, որպէս ծաղիկն եղեմի...
Իրիկուան ժամին ես դիտում էի,
Դիտում լո՜ւռ, երկա՜ր,
Այն պատառ-պատառ
Ծածկոյն ամպերիդ՝ լեցո՜ւն անձրևով,
Որոնցից շատերն բաց-կապոյտ փայլով,
Եւ նուրբ եղերքներն շիկնած, հըրակէզ՝
Սպառնում են նորի՛ց — և մէկ էլ տեսնես,
Մի ակնթարթում ժայռերի վերայ
Պատկերանում է հըրաշք հընօրեայ —
Մի կախարդական ամրոց ահագին,
Բայց շուտով այն էլ կը ցրուէ քամին։
Այդպէս և գողտրիկ երգն է բանտում
Կուռ շըղթաների շառաչն ընդհատում,
Երբ բանտարկեալն է ցընորում դալար
Հայրենի երկրի դաշտերն ու անտառ...
Մինչդեռ այլ ամպեր՝ առաւել ճերմակ,
Քան ձիւնոտ լեռներ, թըռչում են արագ

Դէպի արևմուտք—և օրն անցուցած՝
Շարվում իրար մօտ, կողք-կողքի կրպած.
Եւ նայում ինչպէս պայծառ հայեացքով,
Մինչպէս ճոխ, զուարճ և անփոյթ կերպով,
Որ, կարծես, նոքա այդպէս յաւիտեան
Պէտք է և՛ ապրին, և՛ յաւէտ դուր գան...

III.

Եւ այդ լեռներում, այդ խոր կիրճերում
Վայրենաբարոյ ցեղեր են ապրում:
Նոցա Աստուածն է—լոկ ազատութիւն,
Նոցա օրէնքը—պատերազմ, արիւն.
Եւ մեծանում են, խորհում օր-գիշեր
Նոքա արտակարգ և անգութ գործեր՝
Մատաղ հասակից նուիրած իրանց
Թաքուն ու վայրագ ասպատակութեանց:
Այնտեղ փոքրերին դեռ օրօրոցում
Ռուս անուանով են մայրերը վախցնում:

Այնտեղ յանցանք չէ սպանել թշնամուն,
Անսուտ է և՛ վրէժն, և՛ մրտերմութիւն.
Այնտեղ սովոր են բարիքին՝ բարիք,
Արեան տեղ՝ արիւն—պարգևել մարդիկ.
Այնտեղ, սիրոյ պէս խորն է, անսահմանն,
Ե՛ւ զգացմունքը չար ատելութեան...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/31 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ԵՐԵՍ

Երկու խօսք 3

ՊՈՒՇԿԻՆ

Հրեշտակ 9
Ես կարծում էի 10
Աշնան առաւօտ 11
Անչար (Թոյնի ծառ) 13
Օ՜, վարդ-աղջիկ 16
Բաղձանք 17
Կովկաս 18
Փոթորիկ 20
Թէ շողում եմ 21
Վերածնում 24
Թռչնիկ 25
Կալանաւոր 26

ԵՐԵՍ

Ծաղիկ 27
Մարգարէ 29
Բլբուլ 31
Փառքի տենչը 32
Օ՜, մի՛ տխրիլ (աղատ թարգմանութիւն) 35
Բօսանս 36
Վերջին ծաղիկներ 39
Թալիսման 40
Կեանքի սայլակը 42
Յաւերժահարս 44
Երկու ասպետ 48
Դու հեռաւոր 49
Պօէտ 51
Առակ 53
Ամպ 55
Գիւղ 56
Շո՜ւտ անցան 62
«Բախչիսարայի շատրուանը» պօէմայից (հատուած) 64

ԼԵՐՄՕՆՏՈՎ

ԵՐԵՍ

Հրեշտակ 71
Ո՛չ, այն քեզ չեմ 73
Պ՝ոկուեց կաղնու 74
Տապանագիր 76
Մեղեդի 77
Երբ մեղմ ծփում է 79
Նուէր «Դև» պօէմային 81
Ահով նայում եմ 83
Ո՛չ, ես չեմ ուզում 85
Քեզ մի՛ հաւատար (աղատ թարգմանութիւն) . . 87
Մեռեալի սէրը 90
Մուրացկան 93
Տխուր եմ, տրտում 94
Քե՛զ էի պատմում 95
Երբ կեանքին 96
Աղօթք 98

ԵՐԵՍ

Մարդարէ 99
Ես սիրում եմ 101
Ծովարքայի աղջիկը (ազատ թարգմանութիւն) . . 102
Ընկերին 105
Պաղեստինի ոստը 107
Իմ տունը 110
Ժայռ 112
Կալանաւոր 113
Կաղբէկին 115
Առագաստ 118
Թամար 119
Նժդեհի աղօթքը 123
«Իսմայէլ Բէյ» արևելեան վէպից (հատուած) . 125

ՀՀ Ազգային գրադարան
NL0319655

11627.